ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



# ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

# 2024-2029 թթ.

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Նախաբան..........................................................................................................................................3

Դպրոցի մասին տեղեկատվություն...................................................................................................7

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

1.Ուսհաստատության շենքային պայմանները...................................................................................9

2. Ուսհաստատության նյութատեխնիկական բազան......................................................................10

3.Ուսհաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցությունը.................12

4.Ուսհաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքի հետ.........................................................................................................................14

5.Ուսհաստատության համագործակցությունը կրթության կառավարման մարմնի, շահառու կազմակերպությունների հետ.............................................................................................14

6.Ուսհաստատության համագործակցությունը ծնողական համայնքի հետ..........................15

7. Ուսհաստատության աշակերտական խորհուրդը..............................................................16

8.Հաստատության մանկավարժական խորհրդի, մեթոդական միավորումների գործունեության, մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը.........................17

9. Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաներն ու նորարարությունները..............22

10.Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակը ուսհաստատությունում......23

11. Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրը ուսհաստատությունում.....25

12.Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն.........................................................................................................27

12. Ուսհաստատությունում ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը........29

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1.Կրթական կարիքների նկարագրությունը............................................................................31

2.Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին...............................................................33

3.Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին.............................................................................34

ՆՊԱՏԱԿՆԵՐ, ԴՐԱՆՑԻՑ ԲԽՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ.........................................................................36

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ........................47

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ.......................................................................................54

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ..................................................................................................................58

# ՆԱԽԱԲԱՆ

*«Կրթության ամբողջ նպատակը հայելիները պատուհաններ դարձնելն է»: Սիդնեյ Ջ.Հարիս*

Դպրոցը յուրաքանչյուր պետության լինելիության հենասյունն է, լավ ապագա կերտելու կարևորագույն գործիքը, ուստի պետության, հասարակության կարևոր առաքելությունն է հոգ տանել, որ դպրոցը զարգանա, առաջադիմի, բարեկարգվի ու առողջացվի: Իսկ ի՞նչ ասել է առողջ ու առաջադեմ դպրոց, ի՞նչ քայլեր են հարկավոր ներկայիս զարգացող աշխարհում կրթական մարտահրավերներին դիմակայելու, կարողունակ ու մտածող սերունդ դաստիարակելու համար: Մեր խորհին համոզմամբ՝ միայն աշխատել. արժանապատիվ, բաց, թափանցիկ, միասնական, աշխատանքն է, որ իրապես ունակ է բոլոր հայելիները դարձնել պատուհաններ, որոնք էլ կդառնան ձեռքբերումների, հաղթանակների ուղիներ: Այդ պատուհաններն ունենալն այսօր օրախնդիր է մեր կրթական համակարգը ոտքի հանելու համար, և հենց այդ հանգամանքով պայմանավորված էլ հանրակրթական համակարգը թևակոխել է մի նոր ու կարևոր շրջափուլ, առողջացման շրջափուլ: Զարգացող, բարեկարգ, հարմարավետ, գեղեցիկ դպրոց, նորարար ու ստեղծարար ուսուցիչ, կրթության հարկն իմացող ու մտածող սովորողն ունենալը մեզ համար հրամայական է դարձել, ուստի և պետական մակարդակով իրականացվում են լայնածավալ ու բազմաբնույթ կրթական բարեփոխումներ, որոնց առանցքում կրթության բովանդակության, ուսուցման մեթոդների, ուսուցիչների մասնագիտական ու մեթոդական որակների արդիականացումն ու համապատասխանեցումն է այդ թվում՝ միջազգային կրթական միտումներին:

Իսկ ինչո՞վ են պայմանավորված այս համընդհանուր բարեփոխումները: Մի՞թե մեր դպրոցը հիվանդ է, չէ՞ որ ունենք բազմաթիվ բազմավաստակ մանկավարժներ, սրանք հարցադրումներն են, որոնք, հաճախ են քննարկվում հանրային հարթակներում և մասնագիտական համայնքում: Անհամեստ չհնչի, սակայն, այո', մեր դպրոցն այսօր հիվանդ է և կարիք ունի շուտափույթ առողջացման, նորարարություններով զինման, աշխարհի ռիթմի հետ համաչափ քայլելու, քանի որ մեր սովորողների հիմնական մասը չունի սովորելու մոտիվացիա, հոգնել է պասիվ

լողի իր դերից, ուզում է սովորել՝ մտածելով, նախագծելով, հետազոտելով: Իսկ ի՞նչ է առաջարկվում նրան՝ ավանդական մեթոդներով, անգիր արած գրքային պարբերություններով կրթություն: Հենց վերը թվարկված հարցադրումներն ու դրանց իրական պատասխաններն էլ դրեել են սույն զարգացման ծրագրի առանցքում՝ առաջարկելով կարճաժամկետ և երկարաժամկետ, չափելի, իրագործելի, առարկայական լուծումներ, որոնք վերաբերելի են կրթական գործընթացի բոլոր մասնակիցներին, շահառու խմբերին:

Ժողովրդավար Հայաստանում կրթությունն այլևս պետք է լինի հասանելի աջակցող, ներառական, մասնակցային, բարեվարք, բարեկամական ու հավասար: Այս ճանապարհին, կարծում ենք, որ յուրաքանչյուր մանկավարժական ու վարչական աշխատող պետք է ընդունի կրթական բարեփոխումները, հանդես բերի նոր դեղատոմսեր, գաղափարներ ու նախաձեռնություններ, կարևորի թիմային աշխատանքը, մրցակցի, սակայն ընդհանուր հաղթանակներ ունենալու համար: Չ՞է որ դպրոցի յուրաքանչյուր հաղթանակ բոլորինն է՝ դպրոցինը, համայնքինը, պետությանը: Մեր երկրում կրթությունը և դաստիարակությունը գերակայություններ են, ազգային արժեք, սոցիալական, տնտեսական առաջընթացի կարևոր գործոն: Վերջին տարիներին պետության կողմից մեծ ֆինանսավորում ունեցող այս ոլորտը, ըստ էության, պետք է կարողանա առավելագույն արդյունքներ գրանցել: Սակայն բացթողումներն ակնհայտ են, ռիսկերը՝ բազմաթիվ, իսկ դրանց կառավարումը՝ հաճախ անիրատեսական ու դժվար:

Սույն զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի ենք առել դպրոցի առաջնային կարիքները, կրթության որակին խոչընդոտող հանգամանքները, լսել ենք հաստատության մանկավարժական համակազմի, ծնողների և սովորողների մտահոգությունները, առաջարկությունները, խորապես ուսումնասիրել ենք վերջին մի քանի տարիների դպրոցի ներքին գնահատումը, որպեսզի կարողանանք սահմանել հստակ և թիրախային նպատակներ, դրանցից բխող խնդիրները չլինեն մտացածին, ժամկետները լինեն իրատեսական, իսկ արդյունքը կանխատեսելի և չափելի: Զարգացման ծրագրի համար իրավական հիմք են հանդիսացել՝

- ՀՀ Սահմանադրություն

- «Կրթության մասին» ՀՀ օրենքը
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք
- «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենք
- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2001 թվականի հոկտեմբերի 23-ին)
- «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության եվ տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշում:
- «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առեվտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 661 որոշման մեջ փոփոխություններ կատարելու եվ 1996 թվականի մայիսի 15-ի N 150 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշում
- «Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցների ֆինանսավորման կարգը, պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2022թվականի սեպտեմբերի 22-ի N 1481-Ն որոշում
- «ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2035 թվականների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2015թվականի հուլիսի 25-ի N 797-Ն որոշում

- «Պետական հանրակրթական զարգացման ծրագրի մշակման պահանջների և ձևաչափի մասին» ՀՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 22-ի N 35-հրաման
- «Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները հաստատելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի N 79-Ն հրաման
- «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները եվ նորմերը հաստատելու եվ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2017թվականի մայիսի 28-ի N 12-Ն հրաման:

Այսպիսով, հիմնվելով մեր կողմից անցկացված հանդիպումների, կատարված մշտադիտարկումների, ներքին գնահատման հաշվետվությունների ուսումնասիրությունների վրա, քաջածանոթ լինելով վերը բերված իրավական հիմքերին, դպրոցի օրինակելի կանոնադրությանը՝ մեր կողմից մշակվել է ՀՀ Լոռու մարզի «Սպիտակի Վարդանանց թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2024-2029 թթ. զարգացման ծրագիրը:

Հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ռազմավարական փաստաթուղթը համապատասխան փորձաքննության դրական եզրակացությանն արժանացած զարգացման ծրագիրն է, որն իր մեջ ներառում է՝

- Հաստատության ձեռքբերումների, հիմնախնդիրների ներկայացում, առկա իրավիճակի վերլուծություն:
- Դպրոցի ոլորտային զարգացման հեռանկարները:
- Սովորողների կրթության, դաստիարակության ու զարգացման գերակա նպատակները, խնդիրները, դրանց իրականացման ժամկետները, պատասխանատուները:

- Խնդիրների լուծման ընթացքում հնարավոր ռիսկերն ու դրանց չեզոքացմանը, մեղմանն ուղղված քայլերն ու միջոցները:
- Մանկավարժական գործընթացի և նորարական բարեփոխումների իրականացման մեթոդաբանությունը:
- Աշխատանքների կատարման գնահատման չափանիշները, վերահսկողության մեխանիզմները:

# ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

*Դպրոցի պատմությունը.*

Սպիտակի թիվ 4 միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1955 թ.: Առաջին տնօրենն եղել է Գնորգ Սաղաթելյանը: 1988 թ. դպրոցում սովորում էին մոտ 700 աշակերտ: Դասերն անցնում էին տեխնիկապես հագեցած լաբորատորիաներում և առարկայական կաբինետներում, գործում էին մարզադահլիճը, գեղեցիկ հանդիսությունների դահլիճը: Ավերիչ աղետը խլեց 218 աշակերտի և 13 ուսուցչի կյանք: 1989 թ-ից դպրոցը գործում էր տնակային պայմաններում, իսկ 1993 թ. Քուվեյթի հայ համայնքը դպրոցին նվիրեց նոր շենք: 2005 թ-ին դպրոցը հիմնանորոգվեց, բարեկարգվեց բակը, իսկ 2007 թ. կառուցվեց նոր մարզադահլիճը:

***«Սպիտակի Վարդանանց թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ն այսօր.***

| | |
|---|---|
| *Հանրակրթական ուսումնական հաստատության անվանումը* | «Սպիտակի Վարդանանց թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ |
| *Հանրակրթական ուսումնական հաստատության հասցեն* | ՀՀ Լոռու մարզ ք. Սպիտակ , Այգեստան 53 |
| *Հանրակրթական ուսումնական հաստատության ինտերնետային կայքի հասցեն* | spitak4.schoolsite.am |
| *Հանրակրթական ուսումնական հաստատության էլ. փոստի հասցեն* | spitak4school@yandexs.ru |
| *Հանրակրթական ուսումնական հաստատության հիմնադրման տարեթիվը* | 1955թ. |
| *Հանրակրթական ուսումնական հաստատության կանոնադրության հաստատման մասին տվյալներ* | Կանոնադրությունը հաստատվել է 2022թ-ին |
| *Հանրակրթական ուսումնական հաստատության պետական ռեգիստրում գրանցման համարը* | 03Ա.056856/23.01.2003թ/ |

| | |
|---|---|
| *Հանրակրթական ուսումնական հաստատության հարկայնությունը* | երկհարկանի |
| *Հանրակրթական ուսումնական հաստատության տիպը ըստ իրականացվող հիմնական ծրագրերի* | հիմնական |
| *Հանրակրթական ուսումնական հաստատության տիպը ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի* | տարրական/1-4/, հիմնական/5-9/ |
| *Նախակրթարանի առկայություն* | չի գործում |
| *Աշխատանքային շաբաթը* | հնգօրյա |
| *Աշխատանքային ռեժիմը* | միահերթ |
| *Շինության նախագծային հզորությունը* | 163 տեղ<br>Տարրական կրթություն - 68 տեղ<br>Հիմնական կրթություն- 95 տեղ |
| Շինության ջեռուցումը | լոկալ |


ԼԻՑԵՆԶԻԱ
№ 0326
15 2011

ԼԻՑԵՆԶԻԱ
15 2011

# ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

## 1.Ուսհաստատության շենքային պայմանները

Հանրակրթական ուսումնական հաստատության հարմարավետ, անվտանգ, գեղեցիկ, բարեկարգ շենքային պայմանների առկայությունը կարևոր նախապայման է լավ կրթական համակարգ ունենալու ճանապարհին: Սա միևնույն ժամանակ պետության, հասարակության վերաբերմունքն է կրթության նկատմամբ: Կարծում ենք, որ հնարավոր բոլոր միջոցները պետք է կենտրոնացնել դպրոցաշինության, հին ու անհրապույր դասասենյակներին նոր շունչ հաղորդելու վրա: Սա ևս կարևորագույն խթան է՝ սովորողներին դեպի կրթություն շահագրգռելու, կրթության վարկը բարձրացնելու համար:

*Աղյուսակ 1. Դպրոցի ենթակառուցվածքները.*

| *Ենթակառուցվածք* | *Քանակ* | *Վիճակ* |
|---|---|---|
| Տնօրենի կաբինետ | 1 | լավ |
| Ուսուցչանոց | 1 | լավ |
| Դասասենյակներ | 9 | բավարար |
| Համակարգչային կաբինետ | 1 | բավարար |
| Առարկայական կաբինետներ | 3 | բավարար |
| ՆԶՊ կաբինետ | 1 | լավ |
| Զինասենյակ | 1 | լավ |
| «ԱՐՄԱԹ» ինժեներական լաբորատորիա | 1 | գերազանց |
| Լաբորատորիա | 1 | բավարար |
| Գրադարան | 1 | բավարար |
| Ճաշարան | 1 | գերազանց |
| Խոհանոց | 1 | գերազանց |
| Բուժկետ | 1 | բավարար |
| Հաշվապահի սենյակ | 1 | բավարար |
| Արհեստանոց | 1 | բավարար |
| Մարզադահլիճ | 1 | բավարար |
| Հանդերձարան | 2 | բավարար |
| Սանհանգույց | 4 | բավարար |
| Պահակակետ | 1 | բավարար |
| Կաթսայատուն | 1 | բավարար |
| Սննդի պահեստ | 1 | բավարար |

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Լուսավոր, մաքուր, սանիտարահիգենիկ պայմաններին համապատասխան դասասենյակներ:<br>• Անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքների համար հարմարեցված սենյակներ, տարածքներ:<br>• Շենքի մուտքի մոտ թեքահարթակի առկայություն:<br>• Հակահրդեհային միջոցների, տարհանման ելքերի առկայություն:<br>• Տարհանման պլան-սխեմաների առկայություն:<br>• ԲՏՃՄ լաբորատորիայի, առարկայական սենյակների, այդ թվում՝ ԹԳՀԳ, ՆԶՊ առկայություն:<br>• «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի առկայություն:<br>• Ճաշարանի, սննդի պահեստի առկայություն:<br>• Հոգեբանի սենյակի առկայություն:<br>• Արհեստանոցի, մարզադահլիճի, այլ կարևոր ենթակառուցվածքների առկայություն: | • Շենքը ոչ տիպային է, հարմարեցված:<br>• Դասասենյակները, սանհանգույցները, միջանցքներ, սպորտդահլիճը, հանդիսությունների սրահը, ԲՏՃՄ լաբորատորիաներն ունեն վերանորոգման կարիք:<br>• Հաստատության դռները, պատուհանները հնամաշ են, կարիք ունեն փոխարինվելու:<br>• Հաստատության ջեռուցման համակարգն իրեն չի արդարացնում, ունի փոխարինման կարիք:<br>• Դպրոցի տարածքում չկա ջրահեռացման համակարգ:<br>• Դպրոցում առկա չէ ապաստարան:<br>• Առարկայական դասասենյակների համալրման կարիք է առկա:<br>• Դպրոցի բակն ունի բարեկարգման ու կանաչապատման կարիք:<br>• Դպրոցին հարակից մարզահրապարակն անմխիթար վիճակում է, ունի կանաչապատման, բարեկարգման կարիք:<br>• Դպրոցը չունի ռեսուրս սենյակ: |

## 2.Ուսհաստատության նյութատեխնիկական բազան

Ժամանակակից կրթական միտումներին համապատասխան, տեսանելի ու շոշափելի կրթական ծառայությունների մատուցման համար կարևորագույն բաղադրիչներից է նյութատեխնիկական բազան: Այս ռեսուրսն է ապահովում դասագործընթացի զննականությունը, ուսումնական նյութն առավել տեսանելի ու շոշափելի դարձնում սովորողների համար, ուստի դրա բացակայությունը կամ անբավարարությունն առաջացնում է լրջագույն ռիսկեր՝ որակյալ կրթական ծառայություններ տրամադրելու տեսանկյունից: Բազմաթիվ են նախադեպերը, երբ այս կամ այն զննական պարագան կամ դիդակտիկ նյութը սովորողների և ուսուցիչների նախաձեռնության ու ստեղծարարության շնորհիվ մուտք է գործում դասարան, այդուհանդերձ սա հիմնախնդիր է, որը պահանջում է համակարգային

լուծում և վերաբերելի է բոլոր ուսումնական առարկաներին: Հատկապես տեխնիկական ռեսուրսների, ԲՏՃՄ առարկաների դասավանդման համար նախատեսված սարքերի ու նյութերի ոչ բավարար քանակը խաթարում է ուսումնական գործընթացը, ուստի նյութատեխնիկական բազային հարստացումն ու թարմացումը դպրոցի համար օրախնդիր է, կարևոր ու հրատապ լուծում պահանջող հիմնահարց:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • «Արմաթ» ինժեներական լաբորատորիան հագեցած է նոր գույքով, տեխնիկական նորագույն միջոցներով:<br>• Դպրոցի ճաշարանը հագեցած է անհրաժեշտ տեխնիկայով, սպասքով: Տարրական դպրոցի աշակերտները ստանում են առողջ և որակյալ սնունդ:<br>• Դպրոցի գրադարանը հարուստ է գեղարվեստական գրականությամբ, մեթոդական ձեռնարկներով, ուսումնաօժանդակ նյութերով:<br>• Դասասենյակներում, դպրոցի միջանցքներում փակցված են ճանաչողական պատի թերթեր, ցուցապաստառներ՝ պատրաստված սովորողների կողմից:<br>• Տարրական դասարանների դասասենյակները համալրված են ուսումնաօժանդակ նյութերով, առկա են դիդակտիկ և զննական պարագաներ:<br>• Դպրոցն ունի համակարգչային կաբինետ, ինտերնետ կապ, նախարարության կողմից տրամադրված պլանշետներ, պրոեկցիոն սարք, մեծադիր էկրան: | • Դպրոցի ԲՏՃՄ լաբորատորիան ունի սարքերի և նյութերի թարմացման, ձեռքբերման կարիք:<br>• Դպրոցն ունի դասասենյակների գույքը թարմացնելու կարիք:<br>• Գրատախտակները հնամաշ են, կարիք կա թարմացման:<br>• Հանդիսությունների սրահն ունի աթոռների ձեռքբերման անհրաժեշտություն:<br>• Գրադարանի համար անհրաժեշտ է ձեռք բերել գրապահարաններ:<br>• Համակարգչային սենյակն ունի համապատասխան գույքի ձեռքբերման կարիք:<br>• Մարզադահլիճում կարիք կա մարզագույքի թարմացման ու ձեռքբերման:<br>• Կարիք կա ԿԱՊԿՈՒ սովորողների հետ մասնագիտական աշխատանք իրականացնելու համար անհրաժեշտ պարագաների ձեռքբերման: |

## 3.Ուսհաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցությունը

«Սպիտակի Վարդանանց թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման մարմինը՝ խորհուրդը, ձևավորվել և գործում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանված կարգով: Հաստատության տնօրենը կառավարման խորհրդի նիստերին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով, նիստերը սահմանված կարգով արձանագրվում են: Գումարված նիստերի արդյունքում կայացրած բոլոր որոշումներն ի կատար են ածվում՝ համաձայն ՀՀ օրենսդրության: Խորհրդի աշխատանքները կազմակերպում է խորհրդի նախագահը՝ խորհրդի մնացած անդամների և հաստատության տնօրենի աջակցությամբ: Կառավարման խորհրդի գործունեությունը միտված է՝

- աջակցելու ԴԶԾ-ի կատարմանը,
- վերահսկելու ԴԶԾ-ում ամրագրված տարեկան գործողությունների իրականացումը,
- դիտարկելու ԴԶԾ-ի կատարման ամենամյա հաշվետվությունը, եզրակացություններ տալու,
- հաստատելու դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները:

«Սպիտակի Վարդանանց թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման մարմինն ունի 9 անդամ:

***Աղյուսակ 1. Կառավարման խորհրդի կազմը.***

| | *Ազգանուն, անուն* |
|---|---|
| *1* | Օհանյան Արմինե |
| *2* | Այվազյան Հայկուշ |
| *3* | Սահակյան Վարդան |
| *4* | Սահակյան Մարինե |
| *5* | Մելոյան Մարուսյա |
| *6* | Գրիգորյան Երեմ |
| *7* | Հովսեփյան Վահագն |
| *8* | Օհանյան Արտյոմ |
| *9* | Սաղաթելյան Լևոն |

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
| --- | --- |
| • Խորհրդի նիստերը գումարվում են սահմանված ժամկետում, հստակ սահմանված օրակարգով, անհրաժեշտության դեպքում՝ գումարվում են արտահերթ նիստեր։<br>• Խորհրդի թվով 4 անդամ 2022թ. Մասնակցել են ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպած խորհրդի անդամների վերապատրաստման դասընթացին<br>• Կառավարման խորհուրդը մասակցային և հավասար սկզբունքով քննարկում է դպրոցի ուսումնադաստիարակչական, վարչատնտեսական և այլ ոլորտներին առնչվող հարցեր<br>• Կառավարման խորհուրդը դիտարկում և քննարկում է ԴԶԾ-ի կատարողականի հաշվետվությունները, տալիս եզրակացություններ<br>• Տնօրենը խորհրդին է ներկայացնում դպրոցի ամենամյա ծախսերի նախահաշիվը,գալիք տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը<br>• Կառավարման մարմինը հաստատում է դպրոցի ներքին կարգապահական կանոնները<br>• Խորհրդի անդամները պարբերաբար ներկա են գտնվում հաստատությունում անցկացվող միջոցառումներին, տարաբնույթ նախաձեռնություններին | • Կառավարման խորհրդի ոչ բոլոր անդամներն են նախաձեռնող, կան անտարբեր ու ձեռնպահ անդամներ<br>• Ոչ բոլոր անդամներն ունեն համապատասխան հմտություններ, կարողություններ, նկատելի է իրավական ակտերի, կրթության վերաբերյալ նորամուծությունների ոչ բավարար իմացություն<br>• Ծնողական խորհրդի և մանկավարժական խորհրդի ներկայացուցիչների շրջանում կարիք կա իրազեկվածության բարձրացման, մասնակցային միջավայրի մակարդակի, բարձրացման, տարակարծության խթանման |

## 4.Ուսհաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքի հետ

«Սպիտակի Վարդանանց թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը սերտորեն համագործակցում է նաև ՏԻՄ-ի հետ, հնարավրության դեպքում՝ ամեն բան արվում է նաև համայնքի հետ համագործակցելու, երկուստեք նախագծեր, միջոցառումներ անցկացնելու համար: Այս համատեքստում համայնքի ղեկավարը, համաձայն «Հանրակրթության մասին» և «Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենքների, կատարում է իր պարտավորությունները, մասնավորապես՝

1) աջակցում է համայնքի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացմանը՝ օրենքով սահմանված կարգով.

2) իրականացնում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություն.

3) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

Համայնքի հետ համատեղ իրականացվում են համայնքային նշանակության միջոցառումներ, նշվում են պետական և ազգային տոներ, կազմակերպվում են սպորտային միջոցառումներ: Ուսումնական նախագծերի իրականացման շրջանակներում առավել նկատելի է համայնք-դպրոց կապը. սովորողներն իրականացնում են սոցիալական նշանակության նախագծեր, վարում հարցազրույցներ, անցկացնում սոց. հարցումներ համայնքի բնակիչների շրջանում:

## 5.Ուսհաստատության համագործակցությունը կրթության կառավարման մարմնի, շահառու կազմակերպությունների հետ

«Սպիտակի Վարդանանց թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը համագործակցում է կրթության կառավարման մարմնի և շահառու կազմակերպությունների հետ՝ հաճախակի հանդիսանալով համագործակցության նախաձեռնող: Դպրոցն ունի համագործակցության լայն շրջանակ Լոռու մարզպետարանի կրթության վարչության, ԿԳՄՍ-ի ԿՏԱԿ-ի, ԳԹԿ-ի ՏՄԱԿ-ի, ԿԶՆԱԿ հիմնադրամի հետ՝կարևոր համարելով վերջիններիս ներգրավվածությունը դպրոցի զարգացման գործում: Դպրոցն ունի նաև սերտ համագործակցային

հարաբերություններ Սպիտակի ՔԴԿ-ի, Սպիտակի ԹՈՒՄՈ կենտրոնի, Էյ Թի Փի էկո ակումբի, ԱԻՆ-ի, ՊՆ-ի, Սպիտակի ԲԿ-ի, Ոստիկանության Սպիտակի բաժնի հետ:

## 6.Ուսհաստատության համագործակցությունը ծնողական համայնքի հետ

Ծնողական համայնքի ներգրավվածությունը դպրոցի կառավարմանը, սեփական երեխայի ուսունառության գործընթացին շատ կարևոր հանգամանք է թե' դպրոցի, թե' սովորողի, թե' ծնողի համար: Դպրոցի պարագայում այդ համագործակցությունը խոստանում է աջակցություն, ծնողների՝ դպրոցի միջոցառումներին, արտադպրոցական ուսուցմանը մասնակցության բարձրացում: Սովորողի ուսումնառությանը ծնողի ներգրավվածությունն ապահովում է հետևողականություն, առաջադիմություն, կարգապահության խթանում: Ծնողն էլ իր հերթին դպրոցի հետ համագործակցության շնորհիվ ձեռք է բերում ծնողավարական լրացուցիչ հմտություններ, առավել իրազեկ դառնում սեփական երեխայի ուսումնառության գործընթացից: Ստացվում է, որ կրթական գործընթացի նշված երեք մասնակիցներն էլ այս համագործակցությունից շահում են, ուստի յուրաքանչյուրն իր հերթին պետք է ընդառաջ գնա բարեվարք համագործակցային և փոխվստահության մթնոլորտ ստեղծելուն: «Սպիտակի Վարդանանց թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը շատ է կարևորում ծնողական համայնք-դպրոց արդյունավետ համագործակցության շարունակականության ապահովումը: Հաստատությունում ծնողական խորհրդի աշխատանքները կազմակերպվում են ծնողական ժողովների միջոցով՝ համաձայն դպրոցի ուսումնադաստիարակչական տարեկան պլանի: Հրավիրվում են դասարանական և համադպրոցական ժողովներ, որոնց ընթացքն արձանագրվում է: Ծնողական խորհրդի աշխատանքը վերահսկում է հաստատության տնօրենի դաստիրակչական աշխատանքների գծով տեղակալը: Խորհուրդն ունի 9 անդամ:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Դպրոցն իր լիազորությունների սահմաններում համագործակցում է ՏԻՄԻ- հետ:<br>• Համայնքի հետ իրականացվում են համատեղ միջոցառումներ, հանդիպում-քննարկումներ:<br>• Կրթության կառավարման մարմնի | • Համայնքի հետ համագործակցային հարաբերություններում դպրոցն առավել շահագրգիռ է, իսկ համայնքը՝ առավել ձեռնպահ:<br>• Շահառու կազմակերպությունների թիվը կարիք ունի համալրման:<br>• Համայնքի նշանավոր |

համագործակցություն:
- Դպրոցն ընդառաջ է գնում շահառու կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին, նախաձեռնություններին, ծրագրերին:
- ԿԳՄՍՆ- դպրոց համագործակցության արդյունքում սովորողները անվճար հաճախում են թատրոններ, թանգարաններ:
- Հաստատության մի շարք ուսուցիչներ հետաքրքրություն են ցուցաբերում և մասնակցում ԿԳՄՍՆ-ի կողմից կազմակերպվող դրամաշնորհային միջոցառումներին:
- Հաստատության հոգեբանը, ուսուցչի օգնականը մասնակցում են ՏՄԱԿ-ի կողմից անցկացվող վերապատրաստումներին:
- ՏՄԱԿ-ի բազմամասնագիտական թիմը խորհրդատվական հանդիպումներ է անցկացնում դպրոցի մանկավարժների հետ:
- Հաստատության մի շարք ուսուցիչներ ակտիվ քննարկումներ են ունենում, շահառու կազմակերպությունների առցանց հարթակներում, կիսում իրենց օրինակելի մանկավարժական փորձը:
- Ծնողների հետ պարբերաբար անց են կացվում հանդիպումներ՝ վերջիններիս շրջանում իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով:

ներկայացուցիչների հետ հանդիպումներ հիմնականում չեն անցկացվում:
- Նախկին շրջանավարտների կողմից դպրոցի հետ համագործակցության թույլ մակարդակ է առկա:
- Հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրներ չեն գործում:
- Պասիվ ուսուցիչների առկայությունը խաթարում է համագործակցային հարաբերությունների հաստատումն ու խորացումը շահառու կազմակերպությունների հետ:
- Հաստատության ծնողական խորհուրդը բավական չափով ակտիվ չէ, շատերն ունեն անտարբեր, ձեռնպահ վերաբերմունք:
- Ծնողական ժողովներին ծնողների ներկայացվածությունը չունի բավարար ակտիվություն:

## 7. Ուսհաստատության աշակերտական խորհուրդը

Ուսումնական հաստատությունում գործում է աշակերտական խորհուրդ, որը աշակերտների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմինն է: Խորհուրդն իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է հաստատության կառավարմանը, ուսումնական

գործընթացին, հանդես գալիս նախաձեռնություններով և առաջարկություններով: Դպրոցի աշակերտական խորհուրդն ունի 8 անդամ:

*Աղյուսակ 3. 2023-2024 ուստարում սովորողների թիվն ըստ դասարանների*

| *Դասարան* | *1-ին* | *2-րդ* | *3-րդ* | *4-րդ* | *5-րդ* | *6-րդ* | *7-րդ* | *8-րդ* | *9-րդ* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Աշակերտների թիվ* | 16 | 12 | 16 | 15 | 14 | 9 | 13 | 16 | 9 |
| *ԿԱՊԿՈՒ աշակերտների թիվ* | 2 | | | | | | | | |

*Գծապատկեր 1. Սովորողների առաջադիմությունն ըստ տարիների*




## 8.Հաստատության մանկավարժական խորհրդի, մեթոդական միավորումների գործունեության, մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը

«Սպիտակի Վարդանանց թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհուրդը կազմավորվել է մանկավարժական կոլեկտիվի օգոստոսյան առաջին նիստում 1 տարի ժամկետով: Նիստը վարում է հաստատության տնօրենը, ով ի պաշտոնե հանդիսանում է խորհրդի նախագահը: Նիստերը սահմանված կարգով արձանագրվում են: Մանկավարժական խորհուրդը քննարկում և որոշումներ է

ընդունում՝ համապատասխան օրենքով սահմանված իր լիազորությունների: Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկված են բոլոր մանկավարժները:

*Աղյուսակ 4. Տվյալներ ուսհաստատության աշխատակազմի վերաբերյալ*

| | |
|---|---|
| • Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչներ | 16 |
| • Միջնակարգ մասնագիտական որակավորում ունեցող ուսուցիչներ | 1 |
| • Համատեղությամբ աշխատող ուսուցիչներ | 3 |
| • Պարտադիր վերապատրաստում անցած ուսուցիչներ | 17 |
| • Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչներ | 1 |
| • Տարակարգ ունեցող ուսուցիչներ | 0 |
| • Լաբորանտ | 1 |
| • Գրադարանավար | 1 |
| • Ուսուցչի օգնական | 1 |
| • Հոգեբան | 1 |
| • ԴԱԿ | 1 |
| • Զինղեկ | 1 |
| Ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ | |
| • Վարչատնտեսական մասի համակարգող | 1 |
| • Հաշվապահ | 1 |
| • Գործավար | 1 |
| • Պահակ | 1 |
| • Օպերատոր | 1 |
| • Խոհարար | 1 |
| • Հավաքարար | 2 |
| • Հնոցապան | 3 |

*Աղյուսակ 5. Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը*

| *Ուսումնական տարի* | *Ուսուցիչների թիվը* | *Ծանրաբեռնվածություն* |
|---|---|---|
| *2021-2022* | *17* | *16* |
| *2022-2023* | *17* | *16* |

*Առարկայական մեթոդական միավորումները* մոտ կամ հարակից առարկաներից կազմված առարկայական խմբեր են, որոնք նպաստում են ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացմանը՝ կանոնակարգելով և համակարգելով մեթոդական աշխատանքը դպրոցում: Մեթոդական միավորումների նիստերը գումարվում են ամիսն առնվազն մեկ անգամ, սահմանված կարգով նիստերն արձանագրվում են: Մեթոդական միավորումներն իրականացնում են մի շարք աշխատանքներ, այդ թվում՝

- քննարկել մեթոդամանկավարժական, ուսումնադաստիարակչական հարցեր,
- նախապատրաստվել արտադասարանական, արտադպրոցական միջոցառումներին,
- նպաստել ուսուցիչների մասնագիտական որակների զարգացմանը,
- ուսումնասիրել կրթության վերաբերյալ նորմատիվային և մեթոդական փաստաթղթեր,
- քննարկել ՀՊՉ-ներին համապատասխան դասի պլանավորումները,
- կազմել ուսումնական, թեմատիկ պլաններ, օրվա դասի պլանավորումներ,
- իրականացնել փոխադարձ դասալսումներ, քննարկել արդյունքները,
- մշտադիտարկել առարկաների դասավանդման վիճակը, նախապատրաստվել ներքին գնահատմանը,
- իրականացնել ուսուցման մեթոդների վերլուծություն և այլն:

Ուսհաստատությունում գործում են թվով 4 մեթոդական միավորումներ՝

1. **Հումանիտար**
2. **Բնագիտական**
3. **Տարրական**
4. **Ընդհանուր**

Հաստատությունում իրականացվում է նախագծային ուսուցում, գործում են խմբակներ: Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների բարձրացումը ներկայիս կրթական համակարգի շարժիչ ուժն է: Կրթական բարեփոխումները պայմանավորված են ժամանակակից կրթական նորարարությունների միջոցով կրթության որակի բարձրացմամբ: Հանրակրթական համակարգը պահանջ ունի այնպիսի մանկավարժական աշխատողների, ովքեր,

իրենց մասնագիտական, մեթոդական գիտելիքների, մարդկային որակների շնորհիվ կարող են հարստացնել ուսուցման և դաստիարակության մեթոդները, ավանդական մեթոդների կողքին լայնորեն կիրառել ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, հանդես գալ նորարարություններով և, ի վերջո, ապահովել որակական ու քանակական բարձր արդյունքներ: Աներկբա է, որ ատեստավորումներն ու վերապատրաստումներն իրենց նշանակալի ազդեցությունը բերում են մանկավարժական աշխատողների մասնագիտական որակների բարելավման շարունակականության վրա, այդուհանդերձ, կարծում ենք՝ պակաս կարևոր չէ նաև ուսուցչի նախատրամադրվածությունն ինքնուրույն զարգանալուն, նոր և արդյունավետ մեթոդներ ու մանկավարժական տեխնոլոգիաներ կիրառելուն, գործընկերների հետ համագործակցելուն: Նմանօրինակ ակտիվ ուսուցիչները, ովքեր չեն վախենում նորարարություններից, արդեն իսկ գրանցել են բարձր հաջողություններ: Հենց այս օրինակը պետք է դառնա վարակիչ ուսուցիչների համար՝ նոր բարձունքներ գրանցելու և այդպիսով հանրակրթական համակարգի առողջացմանն իրենց ներդրումը բերելու համար:

«Սպիտակի Վարդանանց թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական համակազմը նույնպես աչքի է ընկնում նորարար ու ստեղծագործ ուսուցիչների առկայությամբ, այդուամենայնիվ կան խնդիրներ, որոնք կարիք ունեն լուծման: Կարծում ենք, որ միայն վերապատրաստման մասնակցելն ու վկայական ստանալը դեռ դրական ցուցանիշ չէ, հարկավոր է ձեռք բերած գիտելիքները կիրառել, տեղայնացնել, հարմարեցնել դասարանի առանձնահատկություններին և սովորողների կրթական կարիքներին: Այստեղ էական դեր ունի նաև մանկավարժների շրջանում իրապես առողջ մրցակցային միջավայրի ապահովումը, փոխօգնության մթնոլորտի ստեղծումը: Ժամանակակից սովորողներին հետաքրքրելն ու նրանց դեպի ուսումնական գործընթացն ուղղելը մանկավարժական կարևորագույն հիմնախնդիր է, և բացառապես կարողունակ, ստեղծարար ու նորորար ուսուցիչը կարող է ապահովել չափորոշչային վերջնարդյունքներին համապատասխան դասագործընթաց: Այդպիսի ուսուցիչ ունենալու համար առանցքային է նաև դպրոցի տնօրենության դիրքորոշումը: Կարևոր է հնարավորինս պատասխանատու կերպով մոտենալ մանկավարժական համակազմի մասնագիտական ու մեթոդական

որակների բարձրացմանը, ապահովել ուսուցիչներին անհրաժեշտ ռեսուրսներով, տեխնոլոգիաներով, այլ աջակցությամբ, որպեսզի դասագործընթացը չկրի ձևական բնույթ, այլ իրապես լինի մասնակցային, դինամիկ և արդյունավետ:

## ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

- Մանկավարժական խորհրդի նիստերն գումարվում են սահմանված կարգով՝ քննարկելով օրակարգային հիմնահարցեր և ընդունելով իր լիազորությունների շրջանակներին համապատասխան որոշումներ:
- Մանկավարժական խորհրդի բոլոր անդամները մասնակցում են խորհրդի նիստերին:
- Մեթոդական միավորման նիստերն իրականացվում են սահմանված կարգով և արձանագրվում են:
- Հաստատության մանկավարժները, բացառությամբ մեկի, ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն:
- Բոլոր մանկավարժները մասնակցում են պարտադիր վերապատրաստումների, սեմինար-քննարկումների:
- Մանկավարժների հիմնական մասը անց են կացնում կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասեր՝ կիրառելով ուսուցման ժամանակակից մեթոդներ, տեխնոլոգիական միջոցներ:
- Մանկավարժներն իրականացնում են նախագծային ուսուցում, ծանոթ են նոր ՀՊՉ-ներին:
- Դպրոցում իրականացվում է երկարօրյա ուսուցում:
- «Առողջ ապրելակերպ» խմբակի ուսուցիչն անցել է համապատասխան վերապատրաստում:

## ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

- Մանկավարժական խորհրդի ոչ բոլոր անդամներն են նախաձեռնող, առկա է ձեռնպահ, երբեմն էլ անտարբեր վերաբերմունք:
- Մեթոդական միավորումների աշխատանքներին քիչ թվով ուսուցիչներ են ակտիվ մասնակցում:
- Ուսհաստատությունում չկա ուսուցչի որակավորման տարակարգ ունեցող ուսուցիչ:
- Կամավոր ատեստավորմանը մասնակցել է ընդամենը 1 ուսուցիչ:
- Մի շարք ուսուցիչներ դժվարություններ ունեն սովորողների գնահատման տարատեսակներն օգտագործելիս:
- ՏՀՏ-ների կիրառությամբ դասեր ոչ բոլոր ուսուցիչներն են անցկացնում:
- Ուսուցիչներից ոմանք նորարար չեն, դժվարություններ ունեն ուսուցման ժամանակակից մեթոդներով դասեր պլանավորելու և վարելու տեսանկյունից:
- Առկա են պահպանողական հայացքներով մանկավարժներ, որոնք դժվարությամբ են ընդառաջ գնում կրթական նորարարություններին:

## 9. Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաներն ու նորարարությունները

Նոր տեխնոլոգիական գործիքները, դասի բազմաբնույթ տիպերը, մեթոդների բազմազանությունն առաջին հայացքից կարող են ուսուցչի աշխատանքային գործընթացում ստեղծել խառնաշփոթ՝ դրանց ճիշտ ընտրության ու կիրառության առումով, սակայն նկատենք, որ դրանք ժամանակակից հանրակրթական համակարգում անհրաժեշտություն են, նոր չափորոշիչներից բխող մանկավարժական գործիքներ, ուստի հարկ են համարում ընդգծել, որ ուսուցիչը պետք է գիտակցաբար մոտենա նորարարություններին, փորձի դրանք կիրառել և հմտանալ: Միայն այս կերպ է հնարավոր խոսել ուսուցմանական գործընթացի արդյունավետության բարձրացման մասին, քանի որ պարզից էլ պարզ է՝ ուսուցման ավանդական մեթոդներն այլևս արդյունավետ չեն:

Կարևոր ենք համարում նաև տեխնոլոգիաների շարունակական կիրառումը, քանի որ դրանք հագեցնում են դասագործընթացը, դարձնում առավել հետաքրքիր, առարկայական: Ուսուցիչը պետք է համացանցը ճիշտ օգտագործելու համար սովորողներին ուղղորդի նախագծերի կամ սոցիալական աշխատանքների ստեղծման ուղղությամբ, որոնք ներբեռնելով համացանց՝ կհամախմբեն այլ մարդկանց՝ դրական նպատակների և գործողությունների իրականացման համար: Բազմաթիվ տեխնոլոգիական գործիքներ դյուրացնում են ուսումնառության գործընթացը, հեշտացնում ուսուցչի աշխատանքը: Առավել արդյունավետ է ՏՀՏ գործիքների համադրումն ուսուցման համագործակցային, ակտիվ, ինտերակտիվ մեթոդների հետ մեթոդների հետ: Ստացվում է, որ տեխնոլոգիաներով և ուսուցման ժամանակակից մեթոդներով հագեցած դասերը ուսուցչի համար կարող են դառնալ արդյունավետ գործիքներ՝ սովորողներին շահագրգռելու, մոտիվացնելու համար:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
| --- | --- |
| • Մի շարք ուսուցիչներ հեշտությամբ կիրառում են ուսուցման ժամանակակից մեթոդներ, անց են կացնում նախագծային աշխատանքներ, ինտեգրված դասեր:<br>• Մեթոդմիավորման շրջանակներում | • Կան ուսուցիչներ, ովքեր հազվադեպ են իրականացնում դասեր՝ ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառությամբ:<br>• ՏՀՏ-ների հետ աշխատելու դժվարություններ ունեն մի շարք |

որոշ ուսուցիչներ ներկայացնում են իրենց փորձը՝ հանդես գալով զեկուցումներով:

- Մանկավարժական աշխատողների մի մասը մշտապես օգտվում է առցանց կրթական հարթակներից՝ ԿՏԱԿ-ի պաշարների շտեմարանից, ԿԶՆԱԿ-ի ուսումնաօժանդակ և մեթոդական նյութերից:
- Մի շարք ուսուցիչներ հեշտությամբ օգտվում են Teams, e-school.am , lib.armedu.am, khanacademy.am կրթական կայքերի հնարավորություններից:
- ԲՏՃՄ առարկաների դասավանդման շրջանակներում սովորողները դիտում են տեսադասեր, առցանց գիտափորձեր:
- Ուսուցիչներից ոմանք հաճախակի անց են կացնում մեդիագրագիտության վերաբերյալ դասեր՝ դասղեկական ժամերի շրջանակներում:

ուսուցիչներ:

- Էլ. գրատախտակների բացակայություն:
- Տեխնոլոգիաների կիրառմամբ դասերը քանակապես և որակապես ունեն բարելավման կարիք:
- Որոշ ուսուցիչների ոչ միշտ է հաջողվում ապահովել լիարժեք մասնակցային ուսումնական միջավայր՝ պայմանավորված ուսուցման ավանդական մեթոդների հաճախակի կիրառությամբ:
- Փոխադարձ դասալսումների արձանագրություններում ուսուցիչները ոչ միշտ են նկարագրում դասի իրական պատկերը՝ խուսափելով դիտողություններից:

## 10.Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակը ուսհաստատությունում

Ուսումնական հաստատությունում կրթադաստիարակչական գործընթացն իրականացվում է՝ հանրակրթական պետական և առարկայական նոր չափորոշիչների հիման վրա: Դպրոցում օրվա դասի պլանավորումները կազմվում են՝ հիմք ընդունելով պետական և առարկայական չափորոշիչներում ամրագրված սկզբունքները, նպատակներն ու վերջնարդյունքները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նոր ՀՊՉ-ով կազմակերպվող ուսումնազանգործընթացը հիմնված է սովորողների կարողունակությունների ձևավորման վրա՝ դպրոցում ամեն բան արվում է հենց կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասեր անցկացնելու համար:

*Աղյուսակ 6. Առարկայական օլիմպիադաներին մասնակիցների թիվը*

| *Ուստարի* | *2021-2022 ուստարի* | *20222023 ուստարի* | *2022-2023 ուստարի* | *2022-2023 ուստարի* |
|---|---|---|---|---|
| Բնագիտական առարկաների օլիմպիադա/մարզային փուլ/ | | | 7 | |
| Բնագիտական առարկաների օլիմպիադա/մարզային փուլ/ | 5 | | | |
| Հանրապետական փուլին մասնակցություն | | 1 | | |
| Տարածքային փուլում մասնակիցների թիվը | | | | 20 |

## ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

- Սկսնակ և չափորոշիչներով աշխատելու դժվարություններ ունեցող ուսուցիչները հաստատության տնօրենության, ուսումնական գծով տնօրենի տեղակալի և մ/մ նախագահի կողմից ստանում են մեթոդական աջակցություն:
- Օրվա դասի պլանավորումները կազմվում են՝ հիմնվելով ՀՊՉ-ների վրա:
- Կիրառվում է ինչպես միավորային, այնպես էլ գնահատման այլ ձևեր:
- 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում անցկացվում են արտաhերթ դասալսումներ՝ մշտադիտարկելու չափորոշիչներով աշխատելու ընթացքն ու արդյունքները:
- Օլիմպիադաների դպրոցական փուլերին մասնակից սովորողների թիվը բավականին մեծ է:
- Կատարվում է հայտորոշիչ, մնացորդային գիտելիքների ստուգում՝ ներքին գնահատման շրջանակներում:
- Ուսուցիչները մասնակցում են ՀՊՉ-ներին վերաբերող վերապատրաստումների, քննարկումների:
- Ուսումնական գործընթացում հաշվի են առնվում սովորողների կրթական կարիքները, կիրառվում են անհատակողմնորոշիչ մանկավարժական մոտեցումներ,

## ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

- Մի շարք ուսուցիչներ լավ չեն տիրապետում գնահատման գործիքներին:
- ԲՏՃՄ ուսումնական առարկաների դասերը հագեցած չեն դիդակտիկ նյութերով և զննական պարագաներով:
- Միջին դպրոցի սովորողների մոտ առկա է սովորելու մոտիվացիայի, առողջ մրցակցության պակաս:
- Դպրոցը տեխնիկապես հագեցած չէ, ինչի արդյունքում տեխնոլոգիական դասերն ունեն որակապես բարելավման կարիք:
- Սովորողների շրջանում քիչ են նորարարները, նախաձեռնողները:
- ԿԱՊԿՈՒ սովորողների համար ստեղծված չեն հարմարավետ ուսումնական պայմաններ:
- Դասագործընթացի ընթացքում սովորողների մասնակցությունը համաչափ չէ:
- Առաջադիմող, շնորհալի սովորողների ներուժն օգտագործելու համար պայմաններն ու նախաձեռնություններն անբավարար են:
- Փոխադարձ դասալսումների արձանագրությունները ցույց չեն տալիս օբյեկտիվ պատկերը, ինչը դժվարեցնում է հիմնախնդիրների բացահայտումը:
- Կան ուսուցիչներ, ովքեր

| | |
|---|---|
| հարկ եղած դեպքում՝ շերտավորված և երկարօրյա ուսուցում:<br>• ԿԱՊԿՈՒ սովորողների համար կազմվում է ԱՈՒՊ:<br>• Անց են կացվում միջառարկայական, ինտեգրված ուսումնական նախագծեր: | դժվարությամբ են կազմում նախագծային ուսուցման ծրագրեր և դժվարանում են ուսումնական տեխնոլոգիայի կիրառման հարցում |

## 11. Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրը ուսհաստատությունում

Ներկայումս հանրակրթական համակարգում օրախնդիր է սովորողների համար մասնակցային, աջակցող և որակյալ ուսումնական միջավայրի ապահովումը: Պակաս կարևոր չէ նաև աշխատակազմի բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ստեղծումը: Թե' մանկավարժական աշխատողի, թե' սովորողի, թե այլ շահառու խմբերի ձայնը պետք է հավասարապես լսելի լինի, որպեսզի ձևավորվի հանդուրժողականության և փոխօգնության մթնոլորտ: Այս համատեքստում իր կարևոր առաքելությունն ունի հաստատության տնօրենը, ով պետք է հարգի և պաշտպանի բոլոր շահառուների՝ օրենքով սահմանված իրավունքները, նաև հնարավորություններ ստեղծի վերջիններիս պարտավորությունների անցնցում կատարման համար:

Խոսելով ներառական միջավայրի մասին՝ պետք է կարևորենք ԿԱՊԿՈՒ սովորողների համար ֆիզիկական և հոգեբանական բարենպաստ միջավայրի շարունակական ապահովման անհրաժեշտությունը, սակայն նկատելի է, որ դպրոցն այս տեսանկյունից չունի բավարար ռեսուրսներ: Մասնավորապես՝ ռեսուրս սենյակի բացակայությունը մեծ դժվարություններ է ստեղծում, թե' մանկավարժական աշխատողների, թե' ԿԱՊԿՈՒ սովորողների համար, ուստի ռեսուրս սենյակի հիմնումը դպրոցի համար առաջնային կարիք կարելի է համարել: Ինչ վերաբերում է բազմակարծիք միջավայրին, պետք է նկատել, որ այս մասով նույնպես առկա են բացեր: Ոչ բոլոր մանկավարժական աշխատողներն են շահագրգռված՝ նոր գաղափարներով հանդես գալու, նորարարական ծրագրեր իրականացնելու: Հիմնականում ձեռնպահ վերաբերմունք են դրսևորում կարևորագույն հիմնախնդիրների քննարկումների՝ պահպանելով չեզոքություն: Մինչդեռ առողջ ու

մասնակցային համագործակցությունը թույլ կտա առավել լավ արդյունքներ ունենալ, քանակական ու որակական բարձր ցուցանիշներ գրանցել:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
| --- | --- |
| • Կրթական գործընթացի բոլոր մասնակցինեչը կաշկանդված չեն կարծիք, տեսակետ հայտնելու, հնարավոր դժգոհությունները բարձրաձայնելու տեսանկյունից:<br>• Հաստատությունում, ըստ անհրաժեշտության, անց են կացվում բաց դռների օրեր ծնողների համար, կազմակերպվում են կոնֆլիկտային իրավիճակների կանխարգելմանն ու կառավարմանն ուղղված քննարկումներ:<br>• Մանկավարժական համակազմը համագործակցում է ԿԱՊԿՈՒ սովորողներիի ծնողների, ՏՄԱԿ-ի հետ:<br>• Մանկավարժական համակազմը մասնակցում է ներառական կրթությանը վերաբերող վերապատրաստումներին, սեմինարներին:<br>• Դպրոցում սովորում են Արցախից տեղահանված 9 սովորող, որոնց համար իրականացել է կարիքի գնահատում, ապահովվում դասագրքերով, գրենական պիտույքներով:<br>• Դասղեկների կողմից աշակերտների հետ մշտապես տարվում են բացատրական աշխատանքներ՝ ԿԱՊԿՈՒ սովորողների նկատմամբ հնարավոր խտրականությունը, հուզական և ֆիզիկական բռնությունը բացառելու նկատառումներից ելնելով:<br>• Մեծ ուշադրություն է դարձվում | • Մանկավարժներից ոմանք ձեռնպահ են, հանդես չեն գալիս առաջարկություններով, առկա է տարակարծության պակաս:<br>• Ծնողական համայնքի ոչ բոլոր ներկայացուցիչներն են ակտիվ քննարկումներին, կան անտարբեր և պասիվ ծնողներ:<br>• Աշակերտների կողմից կա ինքնավարության նկատմամբ անտարբերություն, մոտիվացիայի պակաս:<br>• ԿԱՊԿՈՒ սովորողներիհամար չկան հարմարավետ ուսումնական պայմաններ:<br>• Կան ծնողներ, ովքեր ունեն ծնողավարական ոչ բավարար հմտություններ: |

| | |
|---|---|
| սովորողների անձնային առանձնահատկություններին, բացասական վարքի դրսևորումներին, ինչը կանխվում է բաբացատրական աշխատանքով, ծնողների հետ համագործակցության միջոցով:<br>- Սովորողներն ունեն հավասար հնարավորություններ, բոլորի իրավունքները պաշտպանվում են հավասարապես:<br>- Բոլոր աշակերտներն ունեն սոցիալհոգեբանական պաշտպանվախություն: | |

## 12.Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն

Բարձր աշխատունկաությամբ և մոտիվացված մանկավարժական աշխատողների առկայությունն այսօրվա կրթական համակարգի առողջացման համար անփոխարինելի ռեսուրս է: Ըստ էության՝ կրթական համակարգի շարջիչ ուժը հենց մարդկային ռեսուրսն է, որի համար պեքտ է ապահովել աշխատանքային հարմարավետ և մոտիվացնող մթնոլորտ: Աշխատակազմի արժևորման ու խրախուսման հանգամանքը մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից համակարգում իր արդյունավետությունն արդեն իսկ ապացուցել է: Արժևորել ու խրախուսել աշխատակցին՝ կնշանակի թևեր տալ, ոգևորել, մղել ավելին անելու, առավել նպատակային աշխատելու: Հատկապես կրթական բաեփոխումների ներկայիս փուլում կարևոր է ունենալ խրախուսման և արժևորման այնպիսի մեխանիզմներ, որոնց գործադրումը առավել կշահագրգռի մանկավարժական աշխատողներին, կստեղծի առողջ մրցակցային միջավայր, ինչն էլ իր հերթին ուղիղ համեմատական է որակյալ, աջակցող և մասնակցային ուսումնական գործընթաց ունենալուն: Վերը բերվածով պայմանավորված՝ կարևորում ենք հաստատության տնօրենության կողմից կարողունակ աշխատակիցներին պարբերաբար խրախուսելու և արժևորելու հանգամանքը, ուստի դա մեզ համար առաջնահերթություն է:

Խոսելով ինքնակրթության և ինքնազարգացման մասին՝ պետք է փաստել, որ որևէ վերապատրաստում կամ ատեստավորում չի կարող արդյունավետ համարվել, եթե ուսուցիչը չի կրթում ինքն իրեն: Ներկայիս տեխնոլոգիաները, հարուստ ու հասանելի մեթոդական ու մասնագիտական նյութերը լայն հնարավորություններ են ստեղծում ուսուցիչների համար, որպեսզի ինքնազարգանան, կառուցեն և ամրակայեն իրենց գիտելիքների, հմտությունների և կարողությունների բուրգը, համագործակցեն գործընկերների հետ, սովորեն ու սովորեցնեն: Սա, կարծում ենք առավել հրատապ է դառնում՝ պայմանավորված նոր չափորոշիչների ներդրմամբ: Այս համատեքստում, սակայն, ուսուցիչները բախվում են դժվարությունների, առավել հեռատեսները՝ փորձում են ինքնակրթվել, սովորել, փորձել, իսկ պահպանողական հայացքների տեր մանկավարժական աշխատողների դիրքորոշումն այն է, որ իրենք ամեն ինչ գիտեն: Հենց այստեղ է, որ անելիք ունի ուսհաստատության տնօրենությունը՝ բարձրացնել ուսուցիչների աշխատունակությունը, մոտիվացիան, ապահովել մրցակցային միջավայր, աջակցել ուսուցիչներին ինքնակրթության և ինքնազարգացման հարցերում:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Կարողունակ, նախաձեռնող և ակտիվ ուսուցիչները խրախուսվում են պատվոգրերով, շնորհակալագրերով<br>• Մանկավարժական առցանց հարթակներում որոշ ուսուցիչներ ակտիվ և կառուցողական կերպով համագործակցում են մանկավարժական համայնքի հետ, կիսվում իրենց փորձով<br>• Մանկավարժական խորհրդի նիստերին պարբերաբար անդրադարձ է կատարվում ուսուցիչների մասնագիտական հաջողություններին<br>• Մեթոդական միավորումների շրջանակներում ուսուցիչները ներկայացնում են զեկույցներ, կիսվում մեթոդների և կրթական տեխնոլոգիաների կիրառման իրենց փորձով | • Նորարար, ակտիվ և նախաձեռնող ուսուցիչների թիվն անհամեմատ սակավ է<br>• Որոշ ուսուցիչներ դժվարություններ ունեն փորձի փոխանակման, մասնագիտական համագործակցության ժամանակ<br>• Ուսուցիչները չեն մասնակցում կամավոր ատեստավորմանը, ուսուցչի որակավորման տարակարգ ստանալու գործընթացին<br>• Մանկավարժական աշխատողները հիմնականում հետաքրքրված չեն լիազոր մարմնի, շահառու կազմակերպությունների կողմից կազմակերպվող մրցույթներին |

- Հաստատության տնօրենը, ուս. գծով տեղակալը, մ/մ նախագահը սկսնակ ուսուցիչներին տրամադրում են մասնագիտական խորհրդատվություն
- Մանկավարժական աշխատողները մասնակցում են համայնքի գեղարվեստի և երաժշտական դպրոցների միջոցառումներին, սովորողների հետ այցելում քաղաքային գրադարան
- Դպրոցում ուսուցիչների համար հիմնականում ստեղծված են բոլոր պայմանները՝ ինքնակրթվելու, ինքնազարգանալու, սովորելու և սովորեցնելու

## 13. Ուսհաստատությունում ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը

Ուսումնական հաստատությունն իր ֆինանսական գործունեությունը վարում է բաց և թափանցիկ՝ յուրաքանչյուր ուստարվա ֆինանսական նախահաշիվը հասանելի դարձնելով շահագրգիռ կողմերի և ոլորտի պատասխանատուների համար: Հաստատությանը տրամադրվող ֆինանսական միջոցները ծախսվում են բացառապես հաստատության կարիքների վրա՝ հաշվի առնելով առաջնահերթությունները: Դպրոցում իրականացվող ծախսերի վերլուծությունը ներառում է դրանց արդյունավետության ցուցանիշների գնահատում, պլանավորված բյուջեից շեղումների հայտնաբերում և պլանավորման ցանկացած խնդիրների գնահատում:

**Դպրոցի բյուջեն 2023թ. կազմել է 44645.1 հազար դրամ (այստեղ ներառված է նաև նախորդ տարվա պարտքը ճաշարանի վերանորոգման), որից աշխատավարձ դրան հավասարեցված վճարներ՝ 38317.08 հազար դրամ: Վերջինս կազմում է բյուջեի 88 տոկոսը: Բյուջեի մոտ 5 տոկոսը կազմում են կոմունալ վճարները, 5 տոկոսը՝ «Դպրոցական տաք սնունդ» ծրագրին ուղղված միջոցներն են: Մնացած 2 տոկոսն իր մեջ ներառում է դպրոցի համար ընթացիկ կատարվող ծախսերը (գրենական պիտույքներ, տնտեսական ապրանքներ, գազի տեխսպասարկում, անվտանգություն, գնումներ, ուսուցիչների վերապատրաստման ծախսեր, «Կրթություն» թերթի բաժանորդագրություն, հայտարարության տեղադրում):**

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
| --- | --- |
| • Հաստատության բյուջեի նախագիծը կազմելիս հաշվի են առնվում հրատապ լուծում պահանջող, կենսական նշանակության խնդիրները<br>• Դպրոցը պարբերաբար հրապարակում է ֆինանսական հաշվետվությունները իր պաշտոնական կայքում: | • Հաստատությունը չի իրականացնում ձեռնարկատիրական գործունեություն<br>• Հաստատությունը չունի հավելյան ֆինանսական միջոցների կայուն աղբյուրներ |

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

## 1.Կրթական կարիքների նկարագրությունը

«Սպիտակի Վարդանանց թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը կրթական ծառայություններ մատուցելիս կարևորում է ինքնուրույն, նախաձեռնող, ստեղծագործ, ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետող, սոցիալապես կայացած սովորողների ձևավորումը: Առաջնորդվելով ՀՀ կրթության ոլորտի օրենսդրությամբ, կրթական մի շարք առանցքային փաստաթղթերով, բաց ու թափանցիկ կառավարմամբ՝ հաստատությունը ծավալում է իր գործունեությունը՝ ականջալուր լինելով նաև կրթական համակարգի զարգացումներին, ժամանակակից միտումներին: Այդուամենայնիվ, այս ճանապարհին դպրոցը բախվում է անհաշվելի հիմնախնդիրների, ռիսկերի, անբավարար միջոցների ու ռեսուրսների, որոնք խոչընդոտներ են ստեղծում ուսումնական հաստատության գործունեության անցնցում իրականացման համար: Այդ կարիքները բազմաշերտ են, բազմաբովանդակ, փոխկապակցված, դիտարկենք դրանք.

1. Շենքային ոչ բարեկարգ, գեղագիտական նկարագրով ոչ բավարար, տեղ-տեղ անմխիթար պայմաններ:
2. Ենթակառուցվածքների՝ առարկայական կաբինետների, ռեսուրս սենյակի բացակայություն, անբավարարություն:
3. Ուսումնանյութական բազայի բացակայություն, անբավարարություն/ԲՏՃՄ սարքավորումներ, նյութեր, քարտեզներ, մարզական գույք, համակարգիչներ, էլ գրատախտակներ, զննական պարագաներ/:
4. Դասասենյակների, հանդիսությունների սրահի, ճաշարանի, խոհանոցի գույքի հնամաշ վիճակ:
5. Անբարեկարգ բակ, խոտածածկ չունեցող մարզահրապարակ:
6. ԿԱՊԿՈՒ սովորողների համար հարմարեցված պայմանների՝ ռեսուրս սենյակի, համապատասխան գույքի, նյութատեխնիկական միջոցների բացակայություն:

7. Խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացման կարիք, անդամների իրավազիտակցության, սոցիալական պատասխանատվության բարձրացման, հավասար մասնակցության ապահովման անհրաժեշտություն:
8. Մանկավարժական աշխատողների մասնագիտական հմտությունների բարձրացման կարիք:
9. Նորարար, կրթական նորարարություններին ընդառաջող ուսուցիչների պակաս:
10. Կամավոր ատեստավորման նկատմամբ անտարբերություն, տարակարգի դիմող ուսուցիչների բացակայություն:
11. Պարտադիր վերապատրաստման ընթացքում ձեռք բերված գիտելիքների, հմտությունների կիրառման դժվարություններ ուսուցիչների շրջանում:
12. ՏՀՏ-ներով աշխատելու ցածր մակարդակի հմտություններ որոշ ուսուցիչների շրջանում:
13. Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման դժվարություններ որոշ ուսուցիչների շրջանում:
14. Նոր չափորոշիչներով աշխատելու դժվարություններ ուսուցիչների շրջանում:
15. Պասիվ աշակերտական խորհուրդ, նախաձեռնությունների, առաջարկների ցածր մակարդակ:
16. Շահառու կազմակերպությունների թվաքանակի ընդլայնման կարիք:
17. Կառավարման խորհրդի աշխատանքների արդյունավետության, անդամների մասնագիտական հմտությունների, սոցիալական պատասխանատվության բարձրացման կարիք:
18. Ֆինանսական լրացուցիչ միջոցների ներգրավման անհրաժեշտություն:
19. Հոգաբարձուների, շրջանավարտների խորհուրդների ձևավորման անհրաժեշտություն:
20. Մասնակցային, ներառական մթնոլորտի կայունացման անհրաժեշտություն:
21. Սովորողների սովորելու մոտիվացիայի բարձրացման, աշխատունակության խթանման կարիք:
22. Խմբակների թվաքանակի մեծացման անհրաժեշտություն:

23. Նախագծային աշխատանքների արդյունավետ պլանավորման և իրականացման անհրաժեշտություն:
24. Ներքին գնահատման մեխանիզմների արդյունավետ և օբյեկտիվ իրականացման անհրաժեշտություն:
25. Մանկավարժական համագործակցության խթանման, դասալսումների մշակույթի արժևորման և ձևական տիրույթից դուրս բերման անհրաժեշտություն:
26. Դպրոցական բռնության, օտարման կանխարգելման մեխանիզմների մշակման անհրաժեշտություն:
27. ԿԱՊԿ սովորողների հետ մանկավարժական աշխատանքի հմտությունների կատարելագործում:

## 2.Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին

Դպրոցն ուսումնական գործընթացը կազմակեպում է՝ համաձայն կրթական օրենսդրության, դպրոցի օրինակելի կանոնադրության, հանրակրթական նոր չափորոշիչների: Լիազոր մարմնի կողմից սահմանված բոլոր առաջնահերթությունները կատարվում են՝ փորձելով համապատասխանել պետության կողմից վարվող կրթական քաղաքականության սկզբունքներին: Այդուամենայնիվ, բազմաթիվ ռիսկեր են առկա՝ պայմանավորված մարդկային ռեսուրսի կառավարման ընթացքում հնարավոր խոչընդոտներով, որոնցից առանցքայինը, թերևս, պասիվ, նորարարություններից խուսափող մանկավարժական աշխատողներն են: Այս հանգամանքով պայմանավորված՝ դպրոցում անասելի նվազ է կամավոր ատեստավորմանը մասնակից ուսուցիչների թիվը, իսկ ուսուցչի որակավորման տարակարգի, «Տարվա լավագույնները» մրցույթին և այլ նմանօրինակ ծրագրերի դիմող ուսուցիչներ առհասարակ չկան: Այս համատեքստում իր մեղքի բաժինն ունի նաև ուսհաստատությունը և հարկ ենք համարում կրկին մատնանշել մարդկային ռեսուրսի կառավարման արդյունավետ մեխանիզմների ներդրման անհրաժեշտութունը:

Դպրոցը ամեն կերպ փորձում է ընդառաջ գնալ համայնքի, շահառու այլ խմբերի հետ արդյունավետ համագործակցության հաստատմանը: Այստեղ, սակայն, պետք է նկատել, որ դպրոցի դերն առավել դոմինանտ է՝ որպես համախմբող, համայնքի ներուժը կենտրոնացնող օղակի: Համայնքն առավել պասիվ է. ակտիվ ներկայացուցիչների, նշանավոր մարդկանց, տարբեր մասնագիտությունների տեր շրջանավարտների կողմից նախաձեռնությունները, համատեղ ծրագրերը հազվադեպ են: Այս մասով նույնպես կարելի է տանել համակողմանի աշխատանք՝ դպրոցի դերը համայնքում առավել կարևորելու, սոցիալական ակտիվ աշխատանքներ իրականացնելու նպատակով: Կարծում ենք՝ այս հիմնախնդրի լուծումներից մեկն էլ սովորողների կողմից իրականացվող ուսումնական նախագծերն են, որոնք կարող են ժամանակի ընթացքում առավել ամրակայել համայնք-դպրոց նպատակային համագործակցությունը:

Դպրոցում հնարավորինս կարևորվում և աշխատանքներ են տարվում բոլոր շահառու խմբերի կարիքների բավարարման համար: Բարձր հիմքերի վրա է դրված մարդասիրությունը, ժողովրդավարությունը, սոցիալական ու քաղաքացիական պատասխանատվությունը: Կարծում ենք, որ այս մասով անհրաժեշտ է իրականացնել առանձին միջոցառումներ, կարիքների գնահատում, իրազեկողական աշխատանքներ և նպատակային ռեսուրսների ուղղորդում:

## 3.Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին

Բարեկարգ, որակյալ, հասանելի, աջակցող ուսումնական միջավայր ունենալն այսօր հարակարթական համակարգի գերխնդիրն է: Դպրոցն այստեղ, սակայն, նույնպես ունի բացեր, կարիքներ, անհրաժեշտություններ: Ենթակառուցվածքների տեսանկյունից առաջնային կարիք կարելի է համարել ռեսուրս սենյակի հիմնումը: Հրատապ ենք համարում ԿԱՊԿ ունեցող սովորողների համար ուսումնական անվտանգ, ապահով, հարմար և հասանելի միջավայրի ապահովումը, ուստի այս ուղղությամբ նույնպես գործուն քայլեր են նախանշված զարգացման ծրագրում: Կարևոր ենք համարում նաև սպորտային դահլիճի, դասասենյակների, համակարգչային սենյակի, գրադարանի վերանորոգումը, գեղագիտական և տրամադրող տեսքի ապահովումը: Հատկապես գարնան և աշնան ամիսներին, երբ

ֆիզիկական կուլտուրայի դասերը հաճախ են անցկացվում մարզահրապարակում, անբարեկարգ, խոտածածկ չունեցող տեսքը սովորողների համար տրամադրող չէ, ուստի այս մասով նույնպես բարելավումների կարիքն ակնհայտ է:

Ինչպես արդեն նշել ենք, կրթության մեջ շարժիչ ուժը մարդն է: Այս համատեքստում կարևոր ու պարտադիր ենք համարում, որ հենց մարդկային ռեսուրսը՝ ի դեմս մանկավարժական աշխատողների, փորձի առավելագույն չափով կիրառել իր մտավոր ներուժը, կարողություններն ու հմտությունները, կատարի օրենքով սահմանված իր պարտականությունները, լինի օրինակելի, բարեվարք, աշխատասեր: Այդուամենայնիվ, հիմնախնդիրներ, անհամապատասխանություններ ու դժվարություններ են նկատվում նաև  մարդկային ռեսուրսների կառավարման, նրանց ներուժի լիարժեք օգտագործման հարցերում: Դպրոցում չի կարելի լինել անտարբեր, ձեռնպահ, մեկուսի: Ժամանակակից դպրոցը կարիք ունի ակտիվ, առաջնորդ, ստեղծարար ու նորարար ուսուցչի, ով օրինակ է իր սովորողի, գործընկերոջ համար: Սա մեզ համար կարևոր ու առանցքային դիրքորոշում է, տեսլական,թե ինչպիսին պետք է լինի ուսուցիչը:

# ՆՊԱՏԱԿՆԵՐ, ԴՐԱՆՑԻՑ ԲԽՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ[1]

## ՆՊԱՏԱԿ 1

**Հաստատության շենքային պայմանների բարելավում, նյութատեխնիկական բազայի ձեռքբերում**

| Խնդիր | Գործողություն | Պատասխանատուներ Ժամկետներ | Անհրաժեշտ միջոցներ ռեսուրսներ | Ռիսկեր, |
|---|---|---|---|---|
| Անվտանգ, ապահով, գեղագիտական ուսումնական պայմանների ստեղծում | Վերանորոգել դասասենյակները, առարկայական կաբինետները, սանհանգույցները, ձեռք բերել դռներ, պատուհաններ | Տնօրեն Վարչ. համակարգող Տնտեսվար 2024-2026թթ. | Պետական ֆինանսավորում, Դպրոցի խնայողություններ Դրամաշնորհներ | Ֆինանսական միջոցների անբավարարություն՝ պայմանավորված անսպասելի առաջնահերթություններով, ֆորսմաժորային իրավիճակներով, ժամկետների խախտումներ |
| Գույքի ձեռքբերում | Դասասենյակների, համակարգչային սենյակի, ճաշարանի, հանդիսությունների սրահի համար ձեռք բերել համապատասխան գույք | Տնօրեն Վարչ. համակարգող Տնտեսվար 2024-2029թթ. շարունակաբար | Պետական ֆինանսավորում, Դպրոցի խնայողություններ Դրամաշնորհներ Բարերարներ | Ֆինանսական միջոցների անբավարարություն՝ պայմանավորված անսպասելի առաջնահերթություններով, ֆորսմաժորային իրավիճակներով, ժամկետների խախտումներ |
| Ենթակառուցվածքների Ստեղծում, համալրում | Ստեղծել առարկայական կաբինետներ, ռեսուրս սենյակ | Տնօրեն Վարչ. համակարգող Տնտեսվար 2024-2026թթ. | Պետական ֆինանսավորում Դպրոցի խնայողություններ, | Ֆինանսական միջոցների անբավարարություն՝ պայմանավորված անսպասելի առաջնահերթություններով, ֆորսմաժորային իրավիճակներով, ժամկետների խախտումներ |
| Բակի, հարակից տարածքի, մարզահրապարակի բարեկարգում | Բարեկարգել, կանաչապատել բակը, մարզահրապարակը | Տնօրեն Վարչ. համակարգող Տնտեսվար 2024-2026թթ. | Պետական ֆինանսավորում Դպրոցի խնայողություններ, Համայնքի միջոցներ | Արտաբյուջետային միջոցների, ներդրումների բացակայություն |
| Բոլոր ուսումնական առարկաների համար նյութատեխնիկական բազայի ձեռքբերում, թարմացում | Բոլոր ուսումնական առարկաների համար ձեռք բերել դիդակտիկ նյութեր, զննական պարագաներ | Տնօրեն Վարչ. համակարգող Տնտեսվար Մանկ. Համակազմ 2024-2029թթ. շարունակաբար | Դպրոցի խնայողություններ, Դրամաշնորհներ Բարերարներ Շրջանավարտների խորհուրդ | Ֆինանսական միջոցների անբավարարություն՝ պայմանավորված անսպասելի առաջնահերթություններով, ֆորսմաժորային իրավիճակներով, ժամկետների խախտումներ, արտաբյուջետային միջոցների, ներդրումների բացակայություն |

[1] Սահմանված են նաև նպատակների և խնդիրների իրականացումն ապահովվող գործողությունների ժամանակացույցը, պատասխանատուները, անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաները ,ռիսկերը,ռիսկերը մեղմող կամ չեզոքացնող գործողությունները:

| | | | | |
|---|---|---|---|---|
| Տեխնոլոգիական միջոցների բարելավում | Թարմացնել համակարգիչները, ձեռք բերել օժանդակ սարքավորումներ, էլ. գրատախտակներ | Տնօրեն<br>Վարչ. համակարգող<br>Տնտեսվար<br>2024-2027թթ. | Դպրոցի խնայողություններ<br>Դրամաշնորհներ<br>Բարերարներ<br>Շրջանավարտների խորհուրդ | Արտաբյուջետային միջոցների, ներդրումների բացակայություն: |
| Գրադարանային ֆորդի համալրում | Հարստացնել գրադարանային ֆոնդը ժամանակակից գեղ. գրականությամբ, մեթոդական ձեռնարկներով, ուսումնաօժանդակ նյութերով | Տնօրեն<br>Վարչ. համակարգող<br>Տնտեսվար<br>Գրադարանավար<br>ԴԱԿ<br>2024-2029թթ.<br>շարունակաբար | Բարերարներ<br>Շրջանավարտների խորհուրդ<br>Համայնքի միջոցներ | Արտաբյուջետային միջոցների, ներդրումների, բարերարների բացակայություն |
| ԿԱՊԿՈՒ սովորողների համար ուսումնական պայմանների ապահովում | Ստեղծել համապատասխան գույքով, նյութատեխնիկական բազայով հագեցած ռեսուրս սենյակ | Տնօրեն<br>Վարչ. համակարգող<br>ՏՄԱԿ<br>2024-2025 ուստարի | Պետական ֆինանսավորում<br>Դպրոցի խնայողություններ<br>Դրամաշնորհներ | Ֆինանսական միջոցների անբավարարություն՝ պայմանավորված անսպասելի առաջնահերթություններով, ֆորսմաժորային իրավիճակներով, ժամկետների խախտումներ, արտաբյուջետային միջոցների, ներդրումների բացակայություն: |

## *Ռիսկերը մեղմող գործողություններ*

- Ֆինանսական միջոցների նպատակային օգտագործում,խնայում
- Կամավորների ներգրավում, հոգաբարձուների, շրջանավարտների խորհուրդների ստեղծում
- Դպրոցի խնայողությունների օգտագործում
- Դրամաշնորհային ծրագրերին ակտիվ մասնակցություն
- Բարերարների ներգրավում
- Ձեռնարկատիրական գործունեություն ծավալում
- Շահառու կազմակերպությունների հետ համագործակցության խորացում

## ՆՊԱՏԱԿ 2

**Կրթության որակի շարունակական բարձրացում**

| Խնդիր | Գործողություն | Պատասխանատուներ Ժամկետներ | Անհրաժեշտ միջոցներ, ռեսուրսներ | Ռիսկեր |
|---|---|---|---|---|
| Սովորողների առաջադիմության խթանում, մասնակցային միջավայրի ապահովում | Անցկացնել ակտիվ ու շարժուն դասեր՝ ուսուցման համագործակցային, ինտերակտիվ, պրոբլեմային և մի շարք այլ մեթոդների կիրառությամբ՝ ապահովելով սովորողների համաչափ մասնակցություն դասերին | Տնօրեն<br>Տնօրենի ուս. գծով տեղակալ<br>Մ/մ նախագահ<br>Ուսուցիչներ<br>2024-2029թթ.<br>շարունակաբար | օրվա դասի պլանավորում<br>մարզագույք<br>դիդակտիկ պարագաներ<br>լաբորատոր սարքեր, նյութեր<br>ՏՀՏ | Պահպանողական հայացքներով, ոչ կարողունակ, կրթական նորարարությունները մերժող, չկիրառող ուսուցիչներ, սովորելու մոտիվացիայի ոչ բավարար մակարդակ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | գործիքներ<br>մարդկային ռեսուրս | ունեցող սովորողներ |
| Ուսուցման ժամանակակից մեթոդների, ՏՀՏ-ների կիրառությամբ դասերի վարում | Տեսադասերի, սահիկաշարերի, գիտափորձերի ցուցադրում, առցանց առաջադրանքների, լաբորատոր աշխատանքների կատարում, տեղեկատվության հավաքագրում տեղեկատվական հարթակներից | Տնօրեն<br>Տնօրենի ուս. գծով տեղակալ<br>Մ/մ նախագահ<br>Ուսուցիչներ<br>2024-2029թթ.<br>շարունակաբար | օրվա դասի պլանավորում<br>մարզագույք<br>դիդակտիկ պարագաներ<br>լաբորատոր սարքեր, նյութեր<br>ՏՀՏ<br>գործիքներ<br>մարդկային ռեսուրս | Ուսուցման ժամանակակից մեթոդների, ՏՀՏ-ների կիրառությամբ դասեր վարելու հմտություններ չունեցող ուսուցիչներ |
| Գնահատման տարբեր ձևերի և գործիքների կիրառում | Կատարել հիմնավորված, օբյեկտիվ, անաչառ միավորային գնահատում, օգտագործել ձևավորող գնահատման գործիքներ | Տնօրեն<br>Տնօրենի ուս. գծով տեղակալ<br>Մ/մ նախագահ<br>Ուսուցիչներ<br>2024-2029թթ.<br>շարունակաբար | գնահատման սանդղակներ, ռուբրիկներ, բանավոր հարցարաններ, գրավոր, թեստային աշխատանքներ առցանց առաջադրանքներ<br>մարդկային ռեսուրս | Գնահատման տարբեր ձևերի և գործիքների կիրառման դժվարություններ ունեցող, ինքնակրթությամբ, ինքնազարգացմամբ, փորձի փոխանակմամբ չզբաղվող ուսուցիչներ |
| ՀՊՉ-ների վրա հիմնված ուսումնական գործընթացի կազմակերպում | Դասը պլանավորել և վարել՝ հիմք ընդունելով պետական և առարկայական նոր չափորոշիչները | Տնօրենի ուս. գծով տեղակալ<br>Մ/մ նախագահ<br>Ուսուցիչներ<br>2024-2029թթ.<br>Շարունակաբար<br>ԿԳՄՍ | օրվա դասի պլանավորում<br>մարզագույք<br>դիդակտիկ պարագաներ<br>լաբորատոր սարքեր, նյութեր<br>ՏՀՏ<br>գործիքներ,<br>մարդկային ռեսուրս | ՀՊՉ-ների վրա հիմնված ուսումնական գործընթաց պանավորելու և վարելու դժվարություններ ունեցող ուսուցիչներ |
| Ցուցադրական, ինտեգրված դասերի վարում | Տարբեր առարկաներից վարել ինտեգրված, միջառարկայական կապերի ապահովմամբ դասեր | Տնօրեն<br>Տնօրենի ուս. գծով տեղակալ<br>Մ/մ նախագահ<br>Ուսուցիչներ<br>2024-2029թթ.<br>շարունակաբար | օրվա դասի պլանավորում<br>մարզագույք<br>դիդակտիկ պարագաներ,<br>լաբորատոր սարքեր, նյութեր<br>ՏՀՏ գործիքներ,<br>մարդկային ռեսուրս | Գործընկերների հետ համագործակցության պակաս, դասն ակտիվ և համագործակցային վարելու հմտությունների բացակայություն |
| Նախագծային աշխատանքների անցկացում, խմբակների, երկարօրյան ուսուցման կազմակերպում | Պլանավորել և անցկացնել բազմաբնույթ նախախծային աշխատանքներ, սովորողների հետաքրքրությունների հիման վրա կազմել խմբակներ, ըստ կարիքի կազմակերպել երկարօրյա ուսուցում | Տնօրեն<br>Տնօրենի ուս. գծով տեղակալ<br>Մ/մ նախագահ<br>Ուսուցիչներ<br>2024-2029թթ.<br>շարունակաբար | ուսումնական նախագծերի ծրագիր<br>գրադարանային ֆոնդ<br>տհտ գործիքներ, հարթակներ, հավելվածներ<br>սոց հարցման հարցաթերթիկներ, հարցարաններ<br>այցեր, էքսկուրսիաներ, հարցազրույցներ<br>մարդկային ռեսուրս | Ուսուցման նախագծային մեթոդի, դրա կիրառման վերաբերյալ գիտելիքների պակաս, խմբակներին սովորողների մասնակցության ցածր մակարդակ, երկարօրյա ուսուցման ոչ արդյունավետ կազմակերպում |
| Սովորողների սոցիալական հմտությունների զարգացում, դաստիարակչական նպատակային աշխատանքների | Սովորողներին ներառել տարատեսակ նախաձեռնություններում, միջոցառումներում՝ զարգացնելով նրանց սցիալական և կազմակերպչական հմտությունները: Անցկացնել | Տնօրեն<br>Տնօրենի ուս. գծով տեղակալ<br>Ուսուցիչներ<br>Ուսուցչի<br>Օգնական<br>Դասղեկ | ուսուցողական տեսաֆիլմեր, քննարկումներ, կլոր սեղաններ, հոգեբանական թեստեր, մանկավարժական | Պասիվ, անտարբեր, սոցիալական ցածր պատասխանատվություն ունեցող սովորողներ, անտարբեր ուսուցիչներ, ծնողավարական ցածր հմտություններով |

| | | | | |
|---|---|---|---|---|
| իրականացում | սոցիալական ուղղվածության ուսումնական նախագծեր | ԴԱԿ,<br>Շահառու կազմակերպություններ<br>2024-2029թթ.<br>շարունակաբար | անհատակողմնորոշիչ գործիքներ<br>մարդկային ռեսուրս | ծնողներ, ծնող-դպրոց ոչ արդյունավետ կապ |
| Ուսումնական այլընտրանքային նյութերով և միջոցներով սովորողներին ապահովում | Սովորողներին դասագրքային նյութից բացի տրամադրել առցանց և թղթային ուսումնական նյութեր, առաջադրանքներ | Տնօրեն<br>Տնօրենի ուս. գծով տեղակալ<br>Մ/մ նախագահ<br>Ուսուցիչներ<br>2024-2029թթ.<br>շարունակաբար | գրադարանային ֆոնդ<br>առցանց տեղեկատվական հարթակներ<br>առցանց գրադարաններ,<br>կայքէջեր, սոց. հարթակներ | Ուսուցիչների շրջանում գրքային նյութից կախվածություն, սովորողների հետազոտական հմտությունների, ինքնուրույնության ցածր մակարդակ |
| ԿԱՊԿՈՒ սովորողների համար ուսումնական հարմարավետ պայմանների ապահովում | ԿԱՊԿՈՒ սովորողների ուսուցումը կազմակերպել բազմամասնագիտական թիմի կողմից կազմված ԱՈՒՊ-ի հիման վրա` հաշվի առնելով սովորողների կրթական կարիքները | Տնօրեն<br>Տնօրենի ուս. գծով տեղակալ<br>Մ/մ նախագահ<br>Ուսուցիչներ<br>ՏՄԱԿ<br>Հոգեբան<br>2024-2029թթ.<br>շարունակաբար | ռեսուրս սենյակ,<br>ՏՄԱԿ-ի հետ համագործակցություն,<br>մանկավարժական հատուկ մեթոդներ,<br>միջոցներ, առււյ մարդկային ռեսուրս | ԿԱՊԿՈՒ սովորողների հետ մանկավարժական աշխատանքի թյուրըմբռում, ԱՈՒՊ-ի կազմման դժվարություններ, բազմամասնագիտական թիմի հետ թույլ և ոչ նպատակային համագործակցություն |
| Օլիմպիադաներին սովորողների մասնակցության խթանում | Խրախուսել սովորողներին, հնարավորություն տալ առավել մեծ թվով սովորողների մասնակցելու առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլին | Տնօրեն<br>Տնօրենի ուս. գծով տեղակալ<br>Մ/մ նախագահ<br>Ուսուցիչներ<br>Դասղեկներ<br>2024-2029թթ.<br>շարունակաբար | հարցաթերթեր,<br>թեստային առաջադրանքներ,<br>հավելյալ պարապմունքներ<br>մարդկային ռեսուրս | Օլիմպիադաների նկատմամբ ցածր մակարդակի հետաքրքրվածություն, անարդարության սկզբունքի դրսևորումներ, սովորողների մոտիվացիայի պակաս |
| Արտադպրոցական միջոցառումների, ոչ ֆորմալ դասերի, հանդեսների, մրցույթների, վիկտորինաների անցկացում | Սովորողների համար հաճախակի կազմակերպել ճանաչողական այցեր, էքսկուրսիաներ, նախաձեռնել ուսումնական, մշակութային և սպորտային միջոցառումներ | Տնօրեն<br>ԴԱԿ<br>Գրադարանավար<br>Ուսուցիչներ<br>Դասղեկներ<br>Աշ. խորհուրդ<br>Ծնողխորհուրդ<br>2024-2029թթ.<br>շարունակաբար | այցեր,<br>էքսկուրսիաներ,<br>մրցույթների և վիկտորինաների ծրագրեր, հանդեսների սցենարներ<br>մարդկային ռեսուրս | Պասիվ ծնողական և աշակերտական խորհուրդներ, նախաձեռնության պակաս բոլոր շահառու խմբերի կողմից |

## *Ռիսկերը մեղմող գործողություններ*

- Ուսուցիչների մասնագիտական և մեթոդական որակների բարձրացում, համագործակցային մշակույթի խթանում
- Դասալսումների անցկացում, օբյեկտիվ արձանագրությունների կազմում, քննարկում, սխալների շտկում, վերանայում, անդրադարձ
- ՏՀՏ գործիքների, ուսուցման ժամանակակից մեթոդների վերաբերյալ վերապատրաստումներ, քննարկումներ, փորձարարական դասալսումներ, մեթոդների փորձարկումներ, փորձի փոխանակում, փոխօգնություն
- Նախագծային աշխատանքների ծրագրի կազման, ընթացքի պլանավորման վերաբերյալ մեթոդական զեկուցումների պատրաստում, քննարկում
- Սովորողների նախասիրությունները հաշվի առնելով` խմբակների կազմակերպում
- Երկարօրյա ուսուցման վերաբերյալ իրազեկողական աշխատանքների իրականացում սովորողների և նրանց ծնողների շրջանում, ըստ կարիքնի սովորողների ներգրավում

- ԿԱՊԿՈՒ սովորողների համար ուսումնական հարմարավետ պայմանների ապահովում, ռեսուրս սենյակի հիմնում, ՏՄԱԿ-ի հետ համատեղ ծրագրերի թվի ավելացում, փորձի փոխանակում
- Օլիմպիադաների նկատմամբ սովորողների հետաքրքրվածության մեծացում, մրցակցային մթնոլորտի ապահովում, լավ արդյունքներով սովորողներին խրախուսում
- Աշ. խորհրդի, ծնողխորհրդի դերի ու մասնակցության բարձրացում, առաջարկությունների դիտարկում, հետաքրքիր ու ճանաչողական այցերի կազմակերպում
- Արտադպրոցական և ներդպրոցական վիկտորինաների, մրցույթների կազմակերպում

## ՆՊԱՏԱԿ 3

**Կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության արդյունավետության բարձրացում**

| Խնդիր | Գործողություն | Պատասխանատուներ Ժամկետներ | Անհրաժեշտ միջոցներ, ռեսուրսներ | Ռիսկեր |
|---|---|---|---|---|
| Կառավարման խորհրդի անդամների մասնագիտական որակների բարձրացում, մասնակցային միջավայրի, բազմակարծության ապահովում, տնօրենության կողմից թափանցիկ, հաշվետու փոխգործակցություն | Նախաձեռնել և նեկացնել քննարկումներ, կլոր սեղաններ թեմատիկ քննարկումներ կառավարման խորհրդի անդամների շրջանում, սահմանված ժամկետներում ներկայացնել կատարողականների հաշվետվություններ, կառավարման խորհրդի անդամներին ներգրավել ուսհաստատության ծրագրերում, միջոցառումներում | Տնօրենի Կառավարման խորհուրդ Մանկ. համակազմ 2024-2029թթ. շարունակաբար | սոց հարցումներ, իրավական ակտեր, ՀՊՉ Դպրոցի կանոնադրություն ԴՁԾ ՏՀՏ գործիքներ, մարդկային ռեսուրս | Անտարբեր, ձեռնպահ վերաբերմունքով կառավարման խորհրդի անդամներ |
| Մանկավարժական խորհրդի դերի բարձրացում, ուսուցիչների համար մասնակցային միջավայրի, բազմակարծության ապահովում | Սահմանված կարգով անցկացնել մանկավարժական խորհրդի նիստեր՝ օրակարգում ներառելով կարևոր ու առանցքային հիմնախնդիրներ, մշտապես ոգևորել նոր նախաձեռնությունները, խթանել բազմակարծությունը, ընդառաջ գնալ ուսումնական գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկություններին | Տնօրեն Տնօրենի ուս. գծով տեղակալ Մ/Մ նախագահ Մանկ. խորհուրդ 2024-2029թթ. շարունակաբար | Մանկավարժական խորհրդի օրակարգ, արձանագրություն, պատվոգրեր, շնորհակալագրեր, նախագծեր ՏՀՏ գործիքներ, մարդկային ռեսուրս | Տարակարծության, մասնակցության, մոտիվացիայի պակաս, պասիվ մանկավարժներ |
| Ծնողական խորհրդի դերի բարձրացում, ծնողների համար մասնակցային միջավայրի ապահովում, խոսքի իրավունքի | Ծնողներին ներգրավել ուսումնական հաստատության կառավարման գործընթացին, կազմակերպել հանդիպում-քննարկումներ, բաց դռների օրեր, տրամադրել ծնողներին մանկավարժական | Տնօրեն ԴԱԿ Մանկ. համակազմ Ծնողխորհուրդ 2024-2029թթ. շարունակաբար | Սոց. հարցումներ, հանդիպումներ, քննարկումներ, դասարանային և դպրոցական ծնողական ժողովներ, դրանց օրակարգեր, | Պասիվ, անտարբեր, սոցիալապես անպատասխանատու ծնողներ, չհիմնավորված ղժգոհություններ, անհանդուրժողականություն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| պաշտպանություն | աջակցություն, խրախուսել նորարար, նախաձեռնող, ակտիվ ծնողներին | | արձանագրություններ, հոգեբանի, սոց մանկավարժի, դաստեկի աշխատանք, այլ մարդկային ռեսուրս | |
| Աշակերտական խորհրդի դերի բարձրացում, սովորողների համար ինքնավարության, ինքնուրույնության ապահովում, մասնակցային միջավայրի ապահովում | Բարձրացնել սովորողների ինքնավարության մակարդակը, ընդառաջ գնալ նրանց առաջարկներին, անցկացնել աշակերտական հանդիպումներ, քննարկումներ, խրախուսել ակտիվ ու նախաձեռնող սովորողներին | Տնօրեն<br>ԴԱԿ<br>Մանկ. համակազմ<br>Դաստեկներ<br>Աշակերտական խորհուրդ<br>2024-2029թթ.<br>շարունակաբար | ՏՀՏ<br>գործիքներ, միջոցառումներ, էքսկուրսիաներ, այցեր, աշակերտական նախաձեռնություններ մարդկային ռեսուրս | Պասիվ, անտարբեր, մոտիվացիայի պակաս ունեցող սովորողներ, ինքնուրույնության, նախաձեռնության պակաս, անհանդուրժողական մթնոլորտ, ոչ օրինակելի վարքի դրսևորումներ |
| Մեթոդական միավորումների աշխատանքների արդյունավետության բարձրացում | Մեթոդական միավորումների շրջանակներում տրամադրել աջակցություն սկսնակ ուսուցիչներին, խթանել ուսուցիչների համագործակցությունը, ստեղծել համագործակցային աջակցող միջավայր, քննարկել բացթողումները, թերացումները, միասնաբար գտնել դրանք շտկելու տարբերակներ | Տնօրեն<br>Տնօրենի ուս. գծով տեղակալ<br>Մ/մ նախագահ<br>Ուսուցիչներ<br>2024-2029թթ.<br>շարունակաբար | օրվա դասի պլանավորումներ, մեթոդական ձեռնարկներ, հեղինակային զեկուցումներ, ահիկաշարեր, ՏՀՏ միջոցներ, դասալսումներ մարդկային ռեսուրս | Պասիվ, պահպանողական հայացքներով, ինքնակրթվել, համագործակցել չցանկացող ուսուցիչների առկայություն |
| Հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդների կազմավորում | Տանել նախապատրաստական աշխատանքներ՝ դպրոցում շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդնել հիմնելու նպատակով | Տնօրեն<br>Մանկ. համակազմ<br>Շահառու կազմակերպություններ<br>2024-2029թթ.<br>շարունակաբար | հավաքագրման աշխատանքներ, հանդիպումներ, հարցազրույցներ մարդկային ռեսուրս | Ընթացիկ, անսպասելի դժվարություններ |

## *Ռիսկերը մեղմող գործողություններ*

- Կառավարման մարմնի անդամների շրջանում իրազեկվածության բարձրացում, ոչ կարողունակ, անպատասխանատու անդամների փոխարինում
- Մանկավարժական խորհրդի ակտիվ և սրտացավ անդամների խրախուսում
- Ծնողական խորհրդի հետ իրազեկողական աշխատանքների իրականացում, մանկավարժահոգեբանական աջակցությամբ ծնողավարական հմտությունների բարձրացում
- Աշակերտական խորհրդի համար ինքնավարության օրերի սահմանում, աջակցություն աշակերտական նախաձեռնություններին, ծրագրերին
- Մեթոդական միավորումների շրջանակներում մասնագիտական փորձի արդյունավետ կազմակերպում, մեթոդական թեմատիկ ամիսների դրվածքի սահմանում
- Նախկին շրջանավարտների համար ցերեկույթների կազմակերպում, շահառու խմբերի հետ նպատակային աշխատանքի արդյունքում հոգաբարձուների խորհրդի ձևավորում

## ՆՊԱՏԱԿ 4

**ՏԻՄ-համայնք-դպրոց, կրթության կառավարման մարմին-շահառու կազմակերպություններ-դպրոց**

արդյունավետ համագործակցության ապահովում

| Խնդիր | Գործողություն | Պատասխանատուներ Ժամկետներ | Անհրաժեշտ միջոցներ, ռեսուրսներ | Ռիսկեր |
|---|---|---|---|---|
| Օրենքի սահմաններում ՏԻՄ-ի հետ համագործակցության շարունակականության ապահովում, համայնքի հետ փոխգործակցության խորացում | Կատարել օրենքով սահմանված պարտականությունները ՏԻՄ-ի հետ համագործակցության շրջանակներում, հաճախակի քննարկել դպրոցի կարիքները: Հանդես գալ համայնքային նշանակության միջոցառումներով, նախաձեռնություններով, հանդիպումներ նախաձռնել համայնքի նշանավոր մարդկանց հետ | Տնօրենի Կառավարման խորհուրդ Մանկ. համակազմ 2024-2029թթ. շարունակաբար | Հաշվետվություններ, հանդիպումներ, կլոր սեղաններ, սպորտային, մշակութային, սոցիալական բնույթի միջոցառումներ, այցելություններ մարդկային ռեսուրս | Անտարբեր համայնքի ներկայացուցիչներ, պասիվ մանկավարժական և աշակերտական համակազմ |
| Հաշվետու և բաց համագործակցության շարունակականության ապահովում կրթության կառավարման մարմնի հետ | Մասնակցել կրթության կառավարման մարմնի կողմից իրականացվող ծրագրերին, հանդիպումներին, քննարկել դպրոցի կարիքները, հանդես գալ առաջարկություններով | Տնօրեն Տնօրենի ուս. գծով տեղակալ Մ/մ նախագահ Ուսուցիչներ 2024-2029թթ. շարունակաբար | Հաշվետվություններ, մանկավարժական ծրագրեր, նախաձեռնություններ, հանդիպումներ մարդկային ռեսուրս | Նորարար, նախաձեռնող, ստեղծագործ ուսուցիչների պակաս, պասիվ աշակերտական համակազմ |
| Շահառու կազմակերպությունների հետ արդյունավետ աշխատանք, դրանց թվի մեծացում, համագործակցության հաստատում այլ դպրոցների հետ | Շահագրգռել մանկավարժական աշխատողներին շահառու կազմակերպությունների հետ հախամտեղ ծրագրերի իրականացման առումով, ներգրավել նոր շահառու կազմակերպությունների | Տնօրեն ԴԱԿ Մանկ. համակազմ Ծնողխորհուրդ 2024-2029թթ. շարունակաբար | Համատեղ միջոցառումներ, նախագծեր, ծրագրեր, փոխօգնություն մարդկային ռեսուրս | Կազմակերպչական դժվարություններ, պասիվ մանկավարժական համակազմ, համագործակցության դժվարություններ |

## *Ռիսկերը մեղմող գործողություններ*

- ՏԻՄ ներկայացուցիչներին ընդգրկել համայնքային նշանակության միջոցառումների կազմակերպման գործընթացներում
- Համայնքի նշանավոր, ակտիվ, սրտացավ ներկայացուցիչների հետ իրականացնել հանդիպումներ, վարպետության դասեր, համայնքային նշանակության միջոցառումներ
- Հանդես գալ սոցիալական նշանակության ծրագրերով, իրականացնել համայնքային նշանակության ուսումնական նախագծեր
- Նախաձեռնել և իրականացնել հանդիպումներ, միջոցառումներ շահառու կազմակերպությունների հետ, խրախուսել մանկավարժական և աշակերտական համակազմերի համագործակցությունը շահառու կազմակերպությունների հետ:

## ՆՊԱՏԱԿ 5

**Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների բարձրացում, ինքնազարգացման հնարավորության ապահովում, խրախուսում**

| Խնդիր | Գործողություն | Պատասխանատուներ Ժամկետներ | Անհրաժեշտ միջոցներ, ռեսուրսներ | Ռիսկեր |
|---|---|---|---|---|
| Կամավոր ատեստավորմանը մասնակցելուն ուսուցիչներին ուղղորդում | Հանդիպում-քննարկումներ անցկացնել՝ ուղղորդելով ուսուցիչներին դեպի կամավոր ատեստավորմանրն մասնակցելուն, աջակցել ուսումնական ձեռնարկներով, օժանդակ նյութերով, ապահովել առողջ մրցակցային միջավայր | Տնօրենի Ու.ս գծով տնօրենի տեղակալ Մ/մ նախագահ Մանկ. համակազմ 2024-2025 ուստարի | սեմինար-քննարկումներ խորհրդատվություն մեթոդական նյութեր, մասնագիտական գրականություն մարդկային ռեսուրս | Անտարբեր, ոչ կարողունակ, մասնագիտական ցածր գիտելիքներով ուսուցիչների առկայություն |
| Խորհրդատվական աջակցություն ուսուցիչներին՝ ուսուցչի որակավորման տարակարգին դիմելու հարցում | Խորհրդատվություն տրամադրել ուսուցիչներին ուսուցչի որակավորման տարակարգի փաթեթների կազմման վերաբերյալ, աջակցել մեթոդական նյութերով, անհրաժեշտ միջոցներով՝ մասնակցային, ՏՀՏ միջոցներով, գնահատման տարատեսակներով դասեր վարելու համար | Տնօրեն Տնօրենի ուս. գծով տեղակալ Մ/մ նախագահ Ուսուցիչներ 2024-2025 ուստարի | օրվա դասի պլանավորումներ դասալսման արձանագրություններ ՏՀՏ դասեր գնահատման ռուբրիկներ հարցախույզեր մեթոդական աջակցություն մարդկային ռեսուրս | Նորարար, նախաձեռնող, ստեղծագործ ուսուցիչների պակաս, անտարբեր, ոչ կարողունակ, մասնագիտական ցածր գիտելիքներով ուսուցիչների առկայություն |
| Ուսուցիչների մասնագիտական և մեթոդական որակների բարձրացում | Սկսնակ, ոչ կարողունակ ուսուցիչների հետ տանել մեթոդական և մասնագիտական որակների բարձրացմանն ուղղված աջակցման աշխատանքներ, մ/մ-ի շրջանակներում կազմակերպել քննարկումներ, դասերի վերլուծություններ, մեթոդների, ՏՀՏ գործիքների վերաբերյալ սեմինարներ | Տնօրեն Տնօրենի ուս. գծով տեղակալ Մ/մ նախագահ Ուսուցիչներ 2024-2029թթ. շարունակաբար | համատեղ միջոցառումներ, նախագծեր, ծրագրեր, փոխօգնություն, օրվա դասի պլանավորումներ, դասալսման արձանագրություններ, ՏՀՏ դասեր, գնահատման ռուբրիկներ, ՀՊՉ-ների վերաբերյալ քննարկումներ, մեթոդական աջակցություն, մարդկային ռեսուրս | Նորարարություններից խուսափող, վատատես, պահպանողական ուսուցիչների առկայություն |
| Մանկավարժական աշխատողների ինքնակրթության ինքնազարգացման և փոխգործակցության համար պայմանների ապահովում | Մանկավարժական աշխատողների համար ապահովել ինքնազարգացման և ինքնակրթության համար անհրաժեշտ մեթոդական նյութեր, ՏՀՏ միջոցներ, | Տնօրեն Տնօրենի ուս. գծով տեղակալ Մ/մ նախագահ Ուսուցիչներ 2024-2029թթ. շարունակաբար | համատեղ միջոցառումներ, նախագծեր, ծրագրեր, փոխօգնություն, օրվա դասի պլանավորումներ, դասալսման | Նորարարություններից խուսափող, վատատես, պահպանողական, համագործակցությանը ոչ պատրաստ ուսուցիչների առկայություն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ստեղծել նպատակային փոխգործակցության միջավայր | | արձանագրություններ, ՏՀՏ դասեր, գնահատման ռուբրիկներ, ՀՊՉ-ների վերաբերյալ քննարկումներ, մեթոդական աջակցություն, մարդկային ռեսուրս | |
| Կարողունակ ուսուցիչներին խրախուսելու, արժևորելու մեխանիզմների մշակում | Պարբերաբար խրախուսել ստեղծարար, նախաձեռնող և մոտիվացված ուսուցիչներին, տալ պատվոգրեր, խրախուսագրեր, հաստատության մանկավարժական համակազմի հետ մշակել և սահմանել «Լավ ուսուցիչ» անվանակարգի համար անհրաժեշտ ներդպրոցական չափանիշներ | Տնօրեն<br>Տնօրենի ուս. գծով տեղակալ<br>Մ/մ նախագահ<br>Ուսուցիչներ<br>2024-2025 ուստարի | խրախուսագրեր, պատվոգրեր, օրինակելի փորձի հանրայնացում, դրամական պարգևներ | Ոչ առողջ աշխատանքային մթնոլորտ, խտրականության դրսևորումներ, աշխատանքային բնույթի կոնֆլիկտային իրավիճակներ |

## ***Ռիսկերը մեղմող գործողություններ.***

- Ուսուցիչների շրջանում տանել իրազեկողական, խորհրդատվական աշխատանքներ, խրախուսել նորարարությունը, մասնագիտական աճն ու ինքնազարգացումը
- Ապահովել առողջ մրցակցային միջավայր, փոխօգնության, փոխվստահության մթնոլորտ
- Ուսուցիչների համար ապավովել հարմարավետ պայմաններ՝ ինքնազարգանալու, ինքնակրթվելու, օրինակելի փորձով կիսվելու համար
- Արձանագրել դասալսումների օբյեկտիվ արդյունքները, քննարկել թերությունները, գտնել համատեղ լուծումներ
- Օժանդակել սկսնակ ուսուցիչներին՝ մեթոդական և մասնագիտական հմտությունների զարգացման հարցում
- Ստողծել մասնակցային և արժեքային միջավայր, բարոյահոգեբանական կայուն մթնոլորտ

## ՆՊԱՏԱԿ 6

<u>Ներառական, մասնակցային մթնոլորտի ապահովում, բռնության, օտարման կանխարգելում, առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի հաստատում և շարունակական ապահովում</u>

| Խնդիր | Գործողություն | Պատասխանատուներ Ժամկետներ | Անհրաժեշտ միջոցներ, ռեսուրսներ | Ռիսկեր |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| ԿԱՊԿՈՒ սովորողների համար ապահովել հոգեբանական և ֆիզիկական աջակցող ուսումնական միջավայր, հաշվի առնել նրանց առանձնահատկությունները: Ետ մնացող, առաջադիմող սովորողներն ցուցաբերել անհատական մոտեցում | Ստեղծել համապատասխան գույքով, ուսումնանյութական միջոցներով ռեսուրս սենյակ, շարունակաբար համագործակցել ՏՄԱԿ-ի, ԿԱՊԿՈՒ սովորողների ծնողների հետ: Պաշտպանել ԿԱՊԿՈՒ սովորողներին խտրականությունից, օտարումից, ուսումնական գործընթացը կազմակերպել՝ հիմնվելով ԱՈՒՊ-ի վրա | Տնօրեն<br>Ուս գծով փոխտնօրեն<br>Դասղեկներ<br>Հոգեբան<br>ՏՄԱԿ<br>ԴԱԿ<br>Ծնողական համայնք<br>Մանկ. համակազմ<br>2024-2029թթ.<br>շարունակաբար | ռեսուրս սենյակ,<br>ԱՈՒՊ<br>անհատակողմնորոշիչ մանկավարժական մեթոդներ<br>ՏՄԱԿ-ի հետ համագործակցություն<br>մարդկային ռեսուրս | ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատանքի, ԱՈՒՊ- կազմման դժվարություններ, ռեսուրս սենյակի ստեղծման դժվարություններ |
| Դասագործընթացին ապահովել սովորողների առավելագույն մասնակցություն, դպրոցի միջոցառումներին, նախագծերին հավասարապես ներգրավել բոլոր շահառու խմբերին | Բոլոր սովորողների և մանկավարժական աշխատողների համար ապահովել հավասար պայմաններ: Կիրառելով ուսուցման համագործակցային մեթոդներ՝ խթանել սովորողների համաչափ մասնակցությունը դասին | Տնօրեն<br>Ուս գծով փոխտնօրեն<br>Դասղեկներ<br>Հոգեբան<br>ԴԱԿ<br>Ծնողական համայնք<br>Մանկ. համակազմ<br>2024-2029թթ.<br>շարունակաբար | ուսուցման համագործակցային մեթոդներ,<br>ուսումնական նախագծեր,<br>միջոցառումներ<br>մարդկային ռեսուրս | Պասիվ սովորողներ, ուսուցիչներ, շահառու այլ խմբեր |
| Բացառել բռնությունը, խտրականությունը, օտարումը, կանխարգելել վատ վարքի դրսևորումները, սովորողների հետ տանել դաստիարակչական համապատասխան աշխատանքներ, խստորեն պահպանել օրինակելի վարքականոնները | Դաստիարակչական աշխատանքների, ճանաչողական ու կանխարգելիչ զրույցների, բացատրական աշխատանքների, ընտանիք-դպրոց համագործակցության արդյունքում բացառել դպրոցական բռնությունը, օտարումը, խտրականությունը: Սահմանել օրինակելի վարքականոններ, պահպանել դրանք | Տնօրեն<br>Ուս գծով փոխտնօրեն<br>Դասղեկներ<br>Հոգեբան<br>ԴԱԿ<br>Ծնողական համայնք<br>Մանկ. համակազմ<br>2024-2029թթ.<br>շարունակաբար | բռնության կանխարգելմանն ուղղված տեսադասեր, դաստիարակչական անհատական և խմբային աշխատանքներ,<br>մարդկային ռեսուրս | վատ վարքի անկառավարելի դրսևորումներ, ամենաթողության մթնոլորտ, կոնֆլիկտի կառավարման համար ոչ բավարար գիտակցություն |
| Աշխատակազմի շրջանում ապահովել մասնագիտական էթիկայի նորմերի անվերապահ պահպանություն | Աշխատակազմի շրջանում խրախուսել բարեվարքությունը, քաղաքավարությունը, մարդասիրությունը, այլտրուիզմը, ստեղծել փոխօգնության միջավայր, քննարկել և կառավարել կոնֆլիկտային իրավիճակները, գտնել փախադարձ ընդունելի լուծումներ | Տնօրեն<br>Ուս գծով փոխտնօրեն<br>Դասղեկներ<br>Հոգեբան<br>ԴԱԿ<br>Մանկ. համակազմ<br>2024-2029թթ.<br>շարունակաբար | օրինակելի վարքականոններ,<br>մանկավարժական էթիկայի նորմեր,<br>կոնֆլիկտի կառավարման վերաբերյալ քննարկումներ<br>մարդկային ռեսուրս | մարդկային ցածր արժեհամակարգի կրող, ոչ բարեվարք աշխատակիցներ, դժվարկառավարելի կոնֆլիկտային իրավիճակներ |
| Հարգել շահառու բոլոր խմբերի իրավունքները, ապահովել պարտավորությունների | Պաշտպանելով բոլոր շահառու խմբերի՝ օրենքով սահմանված իրավունքները | Տնօրեն<br>Ուս գծով փոխտնօրեն<br>Դասղեկներ<br>Հոգեբան | իրավագիտակցության բարձրացում թեմատիկ սեմինարների, քննարկումների | Իրավական գիտակցության պակաս |

| | | | | |
|---|---|---|---|---|
| կատարման համար անհրաժեշտ պայմաններ | | ԴԱԿ<br>Ծնողական համայնք<br>Մանկ. համակազմ<br>2024-2029թթ.<br>շարունակաբար | միջոցով,<br>իրազեկողական թերթիկներ<br>մարդկային ռեսուրս | |

*Ռիսկերը մեղմող գործողություններ.*

- Հաճախակի անցկացնել ճանաչողական սեմինարներ քննարկումներ՝ վերաբերող ներառական կրթությանը, մասնակցել վերապատրաստումների
- Անցկացնել համագործակցային դասեր, փոքր համագործակցային խմբերով աշխատանքներ՝ ապահովելով սովորողների համաչափ մասնակցություն
- Բոլոր մանկավարժական աշխատողների համար ապահովել հավասար աշխատանքային պայմաններ, բացառել արտոնությունները
- Պաշտպանել կրթական գործընթացի մասնակիցների իրավունքները
- Դասարաններում, միջանցքներում փակցնել բուլինգը դատապարտող ցուցապաստառներ
- Դատապարտել մանկավարժական աշխատողների ոչ բարեվարք պահվածքը, բամբասանքը, բանսարկությունը
- Օրինակ ծառայել՝ դրսևորելով օրինակելի վարք, հանդուրժողականություն, մարդասիրություն

## ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Դպրոցի զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատումը կարևոր նշանակություն ունի հաստատության կառավարման արդյունավետության բարձրացման, նաև կրթության որակի շարունակական աճի ապահովման համար: ԴԶԾ-ի գնահատման չափանիշները պետք է համապատասխանեն հանրակրթության ոլորտը կարգավորող օրենսդրությանը՝ նպատակ ունենալով ոչ միայն գանահատել կատարված աշխատանքի արդյունքները, այլ նաև հնարավերություններ ստեղծել՝ հետադարձ կապ ապահովելու, սխալները, թերացումները մատնանշելու, շտկելու և վերանայելու համար: Դպրոցի զարգացման

ծրագրի գնահատումը պետք է վերաբերի բոլոր ռազմավարական նշանակության ոլորտներին: Մասնավորապես ուսումնասիրվում և գնահատվում են ներքոբերյալ ուղղությունները.

**1 Շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի գնահատում**

| *Գնահատման ենթակա գործողություն, միջոցառում, ոլորտ* | *Գնահատման չափանիշ*<br>*Բավարար արդյունք* | *Գնահատման չափանիշ*<br>*Լավ արդյունք* | *Գնահատման չափանիշ*<br>*Գերազանց արդյունք* |
|---|---|---|---|
| Վերանորոգման աշխատանքների իրականացում/դասասենյակներ, միջանցքներ, սանհանգույց, սպորտդահլիճ, հանդիսությունների սրահ, գրադարան/ | Աշխատանքները կատարվել են մասնակի, ֆինանսական ռեսուրսները, այլ միջոցները ծախսվել են ոչ արդյունավետ, ժամկետները չեն պահպանվել | Աշխատանքները կատարվել են գրեթե ամբողջությամբ, սահմանված ժամկետների խախտումներով | Վերանորոգման աշխատանքները լիարժեք կատարվել են, ֆինանսական միջոցները ծախսվել են ըստ նպատակի, աշխատանքների կատարման ժամկետները ամբողջությամբ պահպանվել են: |
| Բակի, մարզահրապարակի բարեկարգում, կանաչապատում | Աշխատանքները լիարժեք չեն կատարվել, աշխատանքի պլանավորման, ֆինանսական և մարդկային ռեսուրսների կառավարման մասով առկա են լրջագույն բացեր | Աշխատանքները հիմնականում կատարվել են, սակայն սահմանված ժամկետների ավարտին կան թերություններ | Բակը, մարզահրապարակը բարեկարգ են, կանաչապատ, խնայվել են ֆինանսական միջոցներ |
| Դռների և պատուհանների փոխարինում | Աշխատանքները կատարվել են կիսատ, ֆինանսական միջոցները արդյունավետ չեն կառավարվել | Աշխատանքները հիմնականում կատարվել են, սակայն սահմանված ժամկետի ավարտին դեռ ամբողջապես չեն ավարտվել | Բոլոր դռներն ու պատուհանները փոխվել են թարմացվել՝ համապատասխան ԴԶԾ-ում սահմանված ժամկետների |
| Գույքի ձեռքբերում/ դասասենյակների աթոռներ, սեղաններ, գրատախտակներ, համակարգչային սեղաններ, ճաշարանի գույք, հանդիսությունների սրահի գույք/ | Գույքը ձեռք է բերվել մասնակի՝ առանց հաշվի առնելու առաջնահերթությունները | Գույքը ձեռք է բերվել մասնակի՝ հաշվի առնելով առաջնահերթությունները | Գյուքն ամբողջությամբ ձեռք է բերվել՝ համապատասխան ԴԶԾ-ում սահմանված ժամկետների |
| Ջեռուցման համակարգի թարմացում, ջրահեռացման համակարգի տեղադրում | Աշխատանքները կատարվել են թերացումներով, կան խնդիրներ | Աշխատանքները կատարվել են ամբողջությամբ, սակայն ժամկետները չեն | Տեղադրվել են նոր ջեռուցման և ջրահեռացման համակարգեր, խնայվել են միջոցներ՝ համապատասխան |

| | | | |
|---|---|---|---|
| | | պահպանվել | սահմանված ժամկետների |
| Ենթակառուցվածքների համալրում/ ընթերցասրահ առարկայական կաբինետներ, ռեսուրս սենյակ/ | Ենթակառուցվածքները համալրվել են մասնակի՝ առանց հաշվի առնելու առաջնահերթությունները | Ենթակառուցվածքները համալրվել են մասնակի՝ հաշվի առնելով առաջնահերթությունները | Ենթակառուցվածքները ամբողջությամբ համալրվել են՝ պահպանելով ժամկետներ, խնայելով միջոցներ՝ կամավոր սկզբունքով աշխատող շինարարների աշխատանքի հաշվին |
| Տեխնոլոգիական միջոցների ձեռքբերում/ էլ. գրատախտակ, համակարգիչ, օժանդակ սարքեր/ | Տեխնոլոգիական միջոցները ձեռք են բերվել մասնակի՝ առանց հաշվի առնելու առաջնահերթությունները | Տեխնոլոգիական միջոցները ձեռք են բերվել մասնակի՝ հաշվի առնելով առաջնահերթությունները | Տեխնոլոգիական միջոցները ձեռք են բերվել ամբողջությամբ՝ պահպանելով ժամկետներ, խնայելով միջոցներ՝ նվիրատվությունների հաշվին |
| Նյութատեխնիկական բազայի համալրում/ սարքեր, նյութեր, զննական պարագաներ, մարզագույք, գրադարանային ֆոնդ, քարտեզներ, պաստառներ, ցուցադրական նմուշներ, դիդակտիկ խաղեր/ | Նյութատեխնիկական բազան ձեռք է բերվել մասնակի՝ առանց հաշվի առնելու առաջնահերթությունները | Նյութատեխնիկական բազան ձեռք է բերվել մասնակի՝ հաշվի առնելով առաջնահերթությունները | Նյութատեխնիկական բազան ձեռք է բերվել ամբողջությամբ՝պահպանելով ժամկետներ, խնայելով միջոցներ՝ նվիրատվությունների հաշվին |

## 2. Կրթության որակի բարձրացման վրա ուսումնադաստիարակչական աշխատանքների ազդեցության գնահատում

| *Գնահատման ենթակա գործողություն, միջոցառում, ոլորտ* | *Գնահատման չափանիշ*<br>*Բավարար արդյունք* | *Գնահատման չափանիշ*<br>*Լավ արդյունք* | *Գնահատման չափանիշ*<br>*Գերազանց արդյունք* |
|---|---|---|---|
| Ուսումնական հաստատությունում չափորոշչահեն կրթության կազմակերպում | Բոլոր ուսուցիչները անցել են վերապատրաստումներ, սակայն դժվարություններ ունեն ՀՊՉ-ներով աշխատելու հարցում: | Բոլոր ուսուցիչները անցել են վերապատրաստումներ, նրանցից մի մասը դժվարություններ ունի ՀՊՉ-ներով աշխատելու հարցում | Բոլոր ուսուցիչները անցել են վերապատրաստումներ, որևէ ուսուցիչ չունի դժվարություններ չափորոշչահեն ուսումնական գործընթաց պլանավորելու և վարելու հարցերում |

| | | | |
|---|---|---|---|
| Տարակարգ ստացած, կամավոր ատեստավորմանը մասնակցած և պարտադիր ատեստավերման մասնակից ուսուցիչների առկայություն | Բոլոր ուսուցիչները մասնակցել են պարտադիր վերապատրաստումների, սական կամավոր ատեստավորմանը մասնակցած և տարակարգ ունեցող ուսուցիչներ չկան | Բոլոր ուսուցիչները մասնակցել են պարտադիր վերապատրաստումների, կամավոր ատեստավորման և ուսուցչի որակավորման տարակարգի համար հայտ են ներկայացրել մի շարք ուսուցիչներ | Բոլոր ուսուցիչները մասնակցել են պարտադիր վերապատրաստումների, կան կամավոր ատեստավորմանը մասնակցած և տարակարգ ունեցող ուսուցիչներ, ովքեր մոտիվացնում են նաև մյուսներին |
| Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներ | Դպրոցում չկան համապատասխան հնարավորություններ մանկավարժների մասնագիտական որակների զարգացման համար, ժամանակ առ ժամանակ իրականացվում են սեմինարներ, քննարկումներ | Դպրոցում որոշ չափով ստեղծված են հնարավորություններ՝ մանկավարժական որակները զարգացնելու նպատակով, իրականացվում են փոխադարձ դասալսումներ, քննարկումներ, սակայն մանկավարժների շրջանում նկատելի պասիվություն կա | Դպրոցը ուսուցիչներին ապահովում է անհրաժեշտ մեթոդական և մասնագիտական ձեռնարկներով, ՏՀՏ միջոցներով, անց են կացվում սեմինարներ, քննարկումներ, ակտիվ համագործակցում են մ/մ անդամները, անց են կացվում տարբեր նպատակների դասալսումներ |
| Ներդպրոցական վերահսկողություն | Ներդպրոցական վերահսկողությունը ոչ լիարժեք է իրականացվում | Իրականացվում է ներդպրոցական վերահսկողություն, սակայն մասնակի դեպքերում արդյունքներն օբյեկտիվ չեն | Դպրոցում լիարժեքորեն իրականացվում է ներքին գնահատում, արդյունքներն ամփոփվում են, քննարկվում, խնդրահարույց, ոչ օբյեկտիվ դեպքերը վերանայվում են |
| Սովորողների առաջադիմության ու սովորելու մոտիվացիայի բարձրացմանն ուղղված միջոցառումներ | Մանկավարժները հիմնականում դասը վարում են ուսուցման ավանդական մեթոդներով, ժամանակակից մեթոդների կիրառումը հիմնականում իմիտացիոն բնույթի է՝ պայամանավորված դասալսողի առկայությամբ | Ուսուցիչների հիմնական մասը վարում են կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասեր, կիրառում են ՏՀՏ գործիքներ, համագործակցային, ինտերակտիվ մեթոդներ, անց են կացնում ուսումնական նախագծեր | Բոլոր ուսուցիչները վարում են կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասեր, կիրառում են ՏՀՏ գործիքներ, համագործակցային, ինտերակտիվ մեթոդներ, անց են կացնում ուսումնական նախագծեր |
| ՏՀՏ –ի կիրառումը | Մանկավարժները հիմնականում չեն կիրառում ՏՀՏ գործիքներ դասի ընթացքում, կիրառումը հիմնականում իմիտացիոն բնույթի է՝ պայամանավորված դասալսողի առկայությամբ | Ուսուցիչների հիմնական մասը կիրառում է ՏՀՏ տարատեսակ գործիքներ դասի ընթացքում | Բոլոր ուսուցիչները կիրառում են ՏՀՏ գործիքներ, դժվարությունների դեպքում՝ օգնում միմյանց |

| | | | |
|---|---|---|---|
| Ներդպրոցական,միջդպրոցական և արտադպրոցական միջոցառումների անցկացում | Հազվադեպ են անցկացվում ներդպրոցական, միջդպրոցական, արտադպրոցական միջոցառումներ | Որոշ ուսուցիչներ մշտապես անց են կացնում ներդպրոցական, միջդպրոցական, արտադպրոցական միջոցառումներ | Բոլոր ուսուցիչները անց են կացնում ներդպրոցական, միջդպրոցական, արտադպրոցական միջոցառումներ |
| Կրթական նորարարությունները դպրոցում | Կրթական նորարաությունները դպրոցում ցածր մակարդակի վրա են, ուսուցիչները հիմնականում պասիվ են | Ուսուցիչների հիմնական մասն ակտիվորեն կիրառում է կրթական նորարարություններ | Բոլոր ուսուցիչները փորձում են կիրառել կրթական նորարարություններ, օգնում և աջակցում իրար |

3.Բազմակարծիք, ներառական մասնակցային արժեքային միջավայրի գնահատում

| *Գնահատման ենթակա գործողություն, միջոցառում, ոլորտ* | *Գնահատման չափանիշ*<br><br>*Բավարար արդյունք* | *Գնահատման չափանիշ*<br><br>*Լավ արդյունք* | *Գնահատման չափանիշ*<br><br>*Գերազանց արդյունք* |
|---|---|---|---|
| Ներքին կարգապահական կանոնների պահպանումը | Ոչ բոլոր ուսուցիչներն ու սովորողներն են քաջածանոթ ներքին կարգապահական կանոններին | Աշակերտական համակազմի և աշխատակազմի հիմնական մասը քաջածանոթ է ներքին կարգապահական կանոններին և պահպանում է դրանք | Աշխատակազմի բոլոր անդամներն ու սովորողները քաջածանոթ են ներքին կարգապահական կանոններին և խստորեն պահպանում են դրանք |
| Ուսուցիչների համագործակցությունը, փոխօգնության մթնոլորտը | Մանկավարժական համակազմի միջև չկա արդյունավետ համակործակցություն, փոխօգնության մթնոլորտ ձևավորված չէ | Ուսուցիչների հիմնական մասը համագործակցում է գործընկերների հետ, փոանակվում օրինակելի փորձով, կա փոխօգնության ձևավորված մշակույթ | Բոլոր ուսուցիչները համագործակցում են միմյանց հետ, փոանակվում օրինակելի փորձով, կա փոխօգնության ձևավորված մշակույթ |
| Ներառական միջավայրը դպրոցում | Ներառական միջավայրը բավականին զգայուն է, ԿԱՊԿՈՒ սովորողների համար ստեղծված չեն լիարժեք ուսումնական պայմաններ | Ներառական միջավայրը դպրոցում կատարելագործման փուլում է, ստեղծվում են հարմար և աջակցող պայմաններ ԿԱՊԿՈՒ սովորողների համար | Ձևավորված է լիարժեք ներառական միջավայր, կա ռեսուրս սենյակ, ԿԱՊԿՈՒ սովորողները ստանում են մանկավարժահոգեբանական աջակցությունը, վերջիններիս նկատմամբ կա |

| | | | |
|---|---|---|---|
| | | | դրական վերաբերմունք |
| Արժեհամակարգը դպրոցում | Արժեքային համակարգը դպրոցում կաղում է | Հիմնականում կթական գործընթացի բոլոր մասնակիցներն ունեն մարդկային բարձր արժեքներ | Ժողովրդավարությունը, մարդասիրություն և այլ բարձր արժեքները դպրոցում գերակա են, բոլորը իրավագիտակից են, պատասխանատու |
| Մասնակցային միջավայրը դպրոցում | Մասնակցային միջավայրը խոցելի է, շատ են անտարբեր սովորողներն ու ուսուցիչները | Մասնակցային միջավայրը ձևավորման փուլում է, տարվում են իրազեկողական աշխատանքներ՝ տարատեսակ աշխատանքներին նոր մարդկային ռեսուրսներ ներգրավելու համար | Դպրոցում մասնակցային միջավայրը կայուն զարգանում է, շատ են նախաձեռնողներն ու նորարարները թե' աշակերտների, թե ուսուցիչների շրջանում |
| Կոնֆլիկտային իրավիճակների կառավարում | Կոնֆլիկտային իրավիճակների կառավարման հարցերում կան նկատելի դժվարություններ | Հիմնականում կոնֆլիկտային իրավիճակները կառավարելի են | Կոնֆլիկտային իրավիճակներից խուսափելու համար հնարավոր բոլոր թիրախային խմբերի հետ տարվում են իրազեկման և կանխարգելման աշխատանքներ |

## 4. Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի գնահատում

| *Գնահատման ենթակա գործողություն, միջոցառում, ոլորտ* | *Գնահատման չափանիշ*<br>*Բավարար արդյունք* | *Գնահատման չափանիշ*<br>*Լավ արդյունք* | *Գնահատման չափանիշ*<br>*Գերազանց արդյունք* |
|---|---|---|---|
| Կարողունակ ուսուցիչներին խրախուսագրերի, պատվոգրերի տրամադրում | Հիմնականում որևէ խրախուսանքի, արժևորման գործողություններ չեն իրականացվում | Երբեմն իրականացվում են աշխատակազմին խրախուսելու, արժևորելու միջոցառումներ | Մշտապես իրականացվում են աշխատակազմին խրախուսելու, արժևորելու միջոցառումներ |
| Քանակական և որակական լավ արդյունքներ ունեցող ուսուցիչների հաջողությունների հանրայնացում | Քանակական և որակական լավ արդյունքներ ունեցող ուսուցիչների հաջողությունները | Քանակական և որակական լավ արդյունքներ ունեցող ուսուցիչների հաջողությունները հաճախ | Քանակական և որակական լավ արդյունքներ ունեցող ուսուցիչների հաջողությունները, առանց |

| | | | |
|---|---|---|---|
| | հազվադեպ են հանրայնացվում | հանրայնացվում են | բացառության, հանրայնացվում են |
| Ինքնակրթության միջավայր | Ինքնակրթվող, ինքնազարգացող ուսուցիչների քանակը անասելի ցածր է | Ուսուցիչների հիմնական մասը կարևորում է ինքնակրթությունը, ինքնազարգացումը | Բոլոր ուսուցիչները հետքրքրված են մասնագիտական աճով, մշտապես ինքնակրթվում են, համագործակցում միմյանց հետ |

## 5.ՏԻՄ-դպրոց-համայնք, ծնողական համայնք-դպրոց համագործակցության գնահատում

| *Գնահատման ենթակա գործողություն, միջոցառում, ոլորտ* | *Գնահատման չափանիշ*<br>*Բավարար արդյունք* | *Գնահատման չափանիշ*<br>*Լավ արդյունք* | *Գնահատման չափանիշ*<br>*Գերազանց արդյունք* |
|---|---|---|---|
| ՏԻՄ-դպրոց-համայնք համագործակցությունը | ՏԻՄ-դպրոց-համայնք համագործակցությունը բավականի թույլ է, հազվադեպ են անցկացվում համայնքային նշանակության միջոցառումներ | ՏԻՄ-դպրոց-համայնք համագործակցությունը բավականի ակտիվ է, սական համայնքային նշանակության միջոցառումների թիվը նկատելիորեն քիչ է | ՏԻՄ-դպրոց-համայնք համագործակցությունը բավականի ակտիվ է, մշտապես անցկացվում են համայնքային նշանակության միջոցառումներ |
| Ծնողական համայնք-դպրոց համագործակցություն | Ծնողների հիմնական մասը պասիվ է, չի հետաքրքրվում ներդպրոցական կյանքով | Ակտիվ ծնողները մեծաթիվ են, դպրոցն ամեն կերպ օժանդակում, է որ ծնողները մասնակցեն ներդպրոցական կյանքին | Ծնողական համայնքը կազմակերպված է ակտիվ, մշտապես մասնակցում է դպրոցի համար կարևոր հիմնախնդիրների քննարկմանը, ուսումնական գործընթացին |

## 6. Հալածանքի օտարման և բռնության կանխարգելման ուղղությամբ տարվող աշխատանքների գնահատում

| *Գնահատման ենթակա գործողություն, միջոցառում, ոլորտ* | *Գնահատման չափանիշ*<br>*Բավարար արդյունք* | *Գնահատման չափանիշ*<br>*Լավ արդյունք* | *Գնահատման չափանիշ*<br>*Գերազանց արդյունք* |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| Բուլինգի կանխարգելում | Դպրոցում կա բուլինգ և ոչ միշտ է հնարավոր լիարժեքորեն բացահայտել և կանխարգելել այն | Բուլինգի հնարավոր դեպքերը կանխարգելելու համար տարվում են իրազեկողական աշխատանքներ | Մանկավարժական աշխատողները մշտապես խոսում են բուլինգի մասին, բարձրացնում դրա վերաբերյալ իրազեկվածության մակարդակը, արագ և օպերատիվ բացահայտում և կանխարգելում դեպքերը |
| Մանկավարժահոգեբանական աջակցություն սովորողներին | Սովորողներին հազվադեպ է տրամադրվում մանկավարժահոգեբանական աջակցություն | Սովորողներին անհարժեշտության դեպքում տրամադրվում է մանկավարժահոգեբանական աջակցություն | Մանկավարժահոգեբանական աջակցություն էտրամադրվում բոլոր սովորողներին և նրանց ծնողներին |
| ԿԱՊԿՈՒ սովորողների նկատմամբ վերաբերմունք | ԿԱՊԿՈՒ սովորողները երբեմն բախվում են խտրականության | ԿԱՊԿՈՒ սովորողների նկատմամբ կա նկատելի հանդուրժողականություն, սակայն խտրականության նախադեպեր առկա են | ԿԱՊԿՈՒ սովորողների նկատմամբ առկա է համընդհանուր հանդուրժողական մթնոլորտ, օտարման, խտրականության դեպքեր առկա չեն |

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Հանրակրթական դպրոցի զարգացման ծրագրի  վերահսկողությունն իրականացվում է ուսումնական հաստատության Կառավարման խորհուրդի կողմից: Յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի վերջին տնօրենի կղմից խորհրդին է ներկայացվում զարգացման ծրագրի կատարողականի հաշվետվություն: Շատ կարևոր է, որ կատարողականի արձանագրությունը պարունակի օբյեկտիվ և ամբողջական տվյալներ՝ իրականացված աշխատանքների, ֆինանսական հոսքերի կառավարման, մարդկայի և այլ ռեսուրսների օգտագործման, ուսումնադաստիարակչական գործընթացի իրականացման, մասնակցային, ներառական, արժեքային միջավայրի, նաև՝ կրթական գործընթացի մասնակիցների, շահառու խմբերի հետ տարվող աշխատանքների և համագործակցության վերաբերյալ: Հաստատության տնօրենի կողմից տրամադրվող հաշվետվությունները պետք է պարունակեն որակական և քանակական ցուցանիշներ, կատարված աշխատանքի նկարագրությունը, հնարավոր

չկատարման, թերացման, ժամկետների խախտման կամ շեղումների վերաբերյալ տեղեկատվություն: Ուսհաստատության զարգացման ծրագրի կատարողականի վերաբերյալ հաշվետվությունը պետք է.

1. Լինի օբյեկտիվ, հիմնավոր:
2. Պարունակի փաստական հիմնավորումներով որակական և քանակական տվյալներ:
3. Պարունակի հիմնավորումներ և բացատրություններ՝ վերաբերող թերակատարումներին կամ ձախողումներին:
4. Պարունակի տվյալներ ԴԶԾ-ում հնարավոր վերանայումների, լրամշակումների վերաբերյալ :
5. Վերաբերելի լինի բոլոր ոլորտներին, ուղղություններին, գործողություններին ու միջոցառումներին:

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

| № | Միջոցառում, գործողություն | Ակնկալվող արդյունք | Սահմանված ժամկետ | Կատարված աշխատանքի նկարագրություն | Սահմանված ժամկետում միջոցառման/գործողու թյան չկատարման կամ մասնակի կատարման դեպքում/պատճառներ ը | Զարգացման նշումներ ծրագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին առաջարկություններ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ֆիզիկական վիճակի բարելավում, նյութատեխնիկական բազայի ձեռքբերում | | | | | | |
| 2 | Ապահով, անվտանգ, հարմարավետ միջավայրի ձևավորում | | | | | | |
| 3 | Ռեսուրս սենյակի կառուցում | | | | | | |
| 4 | Սպորտդահլիճի, հանդիսությունների սրահի վերանորոգում | | | | | | |
| 5 | Բակի,մարզահրապարակի բարեկարգում, կանաչապատում | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | Պատուհանների, դռների ձեռքբերում | | | | | | |
| 7 | Ջեռուցման համակարգի փոխարինում | | | | | | |
| 8 | Ջրահեռացման համակարգի կառուցում | | | | | | |
| 9 | Դասասենյակների, միջանցքների, սանհանգույցների վերանորոգում, կահավորում | | | | | | |
| 10 | Ընթերցասրահի հիմնում | | | | | | |
| 11 | Մրզագույքի , համակարգիչների ձեռքբերում | | | | | | |
| 12 | Առարկայական կաբինետների հիմնում, կահավորում | | | | | | |
| 13 | Նյութատեխնիկական բազային ձեռքբերում | | | | | | |
| 14 | Գրադարանային ֆոնդի համալրում, գույքի ձեռքբերում | | | | | | |
| 15 | Կառավարման մարմնի և տնօրենի համագործակցություն | | | | | | |
| 16 | Խորհրդակցական մարմինների գործունեություն | | | | | | |
| 17 | Շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդների հիմնում | | | | | | |
| 18 | ՏԻՄ-համայնք-դպրոց համագործակցություն | | | | | | |
| 19 | Շահառու կազմակերպություննե րի հետ համագործակցություն | | | | | | |
| 20 | Կրթության կառավարման մարմնի հետ համագործակցություն | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 21 | Ուսումնական միջավայրը | | | | | | |
| 22 | Չափորոշչաին կրթական ծառայությունների մատուցում | | | | | | |
| 23 | Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում | | | | | | |
| 24 | ՏՀՏ-ների կիրառում | | | | | | |
| 25 | ԿԱՊԿՈՒ սովորողների կրթական կարիքների բավարարում | | | | | | |
| 26 | Մասնակցային., արժեքային միջավայր | | | | | | |
| 27 | Երկարօրյա, արտադպրոցական ուսուցում | | | | | | |
| 28 | Ուսումնական նախագծերի անցկացում | | | | | | |
| 29 | Խմբակների կազմակերպում | | | | | | |
| 30 | Ներքին գնահատում | | | | | | |
| 31 | Մանկավարժական համակազմի համագործակցություն , ինքնակրթություն | | | | | | |
| 32 | Մանկավարժական համակազմի արժնորում, խրախուսում | | | | | | |
| 33 | Կոնֆլիկտային իրավիճակների կառավարում | | | | | | |
| 34 | Ուսուցչի որակավորման տարակարգին դիմողները | | | | | | |
| 35 | Մասնակցություն կամավոր ատեստավորմանը | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 36 | Սովորողակենտրոն ուսուցումը դպրոցում | | | | | | |
| 37 | Ժողովրդավարություն ը դպրոցում | | | | | | |
| 38 | Իրավունքների, խոսքի ազատության, բազմակարծության պաշտպանությունը դպրոցում | | | | | | |
| 39 | Օտարման, խտրականության կանխարգելումը դպրոցում | | | | | | |
| 40 | Կատարված ֆինանսական ծախսերի նկարագիրը | | | | | | |

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ














ԿՈՄԻՏԱՍ
1869 1935




ՀԱՎԵՐԺ ՄԵԶ ՀԵՏ












լվանալ
ձեռքերը

